ԳԻՐՔ LVIII



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1909 № 11 ՆՈՅԵՄԲԵՐ

ԹԻՖԼԻՍ
ԱԼԵՔՍԻՊՈՅԼՍ ՏՊԱՐԱՆ ՍՊ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՓՈՂՈՑ 7.
1909

ՈՌՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեծ իշխան Միխայիլ Նիկոլայևիչ։
Անցեալի յուշեր. Տիրուճի Կոստանեան 3
Զգաուշ եմ. Բանաստ. Յար. Պետրոսեան 8
Ազատ կանք ըստ Իբսենի. Գար. Ենգ. 9
Նորագոյն պատմագիտութիւն Կարլ Լամբրեխտի Pessimist 15
Սաադիի Գիւլիստանից. պարոկ. թարգմ. Մեսրոպ Վ. Մախուտեանց 35
Մի վիատիր. Բանաստ. Յար. Պետրոսեան 39
Գարեգին Ե. Սրուանձտեանց. պատկերը և կենսագր. Յովհ. ամ. Մկրեան 40
Տ. Կոստանդին Կեսարացի. Մ. Ա. Սրմանեան 46
Շնային կարգը մարդկային դասակարգերի մէջ Կ. Պօլսում. Մարկոս Աղաբէգեան 54

ԱՄՓՈՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Առաջիկայ բաժանորդագրութեան առիթով. Խմբագր. 60
Լուրեր.—Ստացուած գրքեր։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԻՐՔ LVIII



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1909 № 11 ՆՈՅԵՄԲԵՐ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՕԼԻՑ. 7.
1909

† ՄԵԾ ԻՇԽԱՆ ՄԻԽԱՅԻԼ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉ

Դեկտեմբերի 5-ին Կանն քաղաքում իր մահկանացուն կնքեց Կովկասի նախկին փոխարքայ Ն. Կ. Բ. Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայևիչը։

Հանգ. Մեծ իշխանի յիշատակը սերտ կերպով կապուած է Կովկասի հետ. Նա իր 20 ամեայ փոխարքայութեան ժամանակ իբրև խնամատար հայր է նայել Կովկասի բոլոր ազգութիւնների և նրանց հետ նաև հայ ժողովրդի վրայ, նրան են պարտական Կովկասի ինչպէս ուրիշ ազգերի, այնպէս էլ հայերի բազմաթիւ կուլտուրական հաստատութիւնները, և այսօր կտեսնէք շատ դպրոցական և նման հաստատութիւններ նրա անուան նուիրուած։

Կարելի է ասել, որ նրա համար խտիր չկար ռուս և օտար ազգերի մէջ և Ն. Կ. Բ. օրօք Կովկասը բարգաւաճութեան և քաղաքակրթութեան ճանապարհի վրայ էր, որ Նրա հեռանալով կորցրեց շատ բան։

Ահա թէ ինչու Ն. Կ. Բ. անունը այնքան համակրելի է Կովկասի ամեն ազգութիւնների համար և թէ ինչու այսպէս խորին կերպով ողբում են ամենքը և նոցա հետ մենք, հայերս։

ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒԹԵՐ

Երկաթուղու խիստ ցնցումից Մուշեղն աչքերը բացեց և դեռ քնաթաթախ սկսեց մտաբերել իւր քաղցր երազը։ Փիչ առաջ նա գանուում էր իւր գեղեցիկ, կանաչազարդ, բուրաւէտ հայրենիքում, շրջապատուած սիրասուն զաւակներով. նոցա սիրունիկ աչիկները պսպղում էին մանկական անմեղ քնքշանքով և ալ վարդի նման շրթունքները թոթովում էին՝ «հայրիկ, հայրիկ ջան» խօսքերը։

Այդ յիշելիս նա խորը ֆխ քաշեց, աչքերը տրորեց, սկսեց նայել շուրջը և յանկարծ, այդ վայրկեանին միայն նկատեց ազօտ լուսով լուսաւորուած կուպէում իւր դիմացը նստած մի Թուրքի։ Նա կարծես ցնցուեց, վրէժխնդրութեան կրակով վառուեցան նորա սևորակ, խելօք աչքերը. ձեռքը մեքենաբար տարաւ գրպանը և մի դառնութիւն, թախիծ պատեց նորա դէմքին... Վաղուց չէր, որ սիրելի հայրենիքն տրեան ծով էր դարձել, վաղուց չէր, որ իւր մերձաւորներից քանիսը զոհ էին գնացել անմիտ, եղբայրասպան կոտորածին. այո, վաղուց չէր վերջապէս, որ հայ շէն տներն ու օջախները հրի ճարակ էին դառել, աւերուել ու կործանուել հարևան Թուրքերի ձեռքով. և այժմ նորանից մէկն արիւնարբու երեսով նստած է իր հանդէպ... Մուշեղը նայեց վեր, վար, որ տեսնի թէ տեղն ԷՆ արդեօք իւր իրեղէնները, գլխաւորապէս այն արկղը, որ այնքան խնամքով, հոգատարութեամբ, իր ձեռքով բերել, պարտակել էր այդտեղ. այո, այդ արկղի համար է, որ նա տուն, տեղ, ծերունի ծնողներ, ազգական ու ընտանիք բաղդի բերմունքին թողած, գնացել էր հեռո՞ւ, ամիսներ շարունակ դեգերել էր չարքաշութեամբ գէնք գնելու համար։

Չէ, տեղն էր ամեն ինչ. բայց Մուշեղի սիրտը կասկած ընկաւ. չլինի՞ թէ թուրքը հետևում է իրան. չլինի՞ թէ նա արկղի հոտն առել է... և մատնելու է... չլինի՞ այս, կամ այն... և քանի գնում, անհանգստանում էր ու մի բոպէ դադար չէր կարողանում նստել. այն ինչ հարևանն աչքերը շարունակ մի կէտի յառած, նստած էր ինչպէս մի արձան։

Երկաթուղին քանի գնում արագացնում էր քայլը. այդ ժամանակ Մուշեղի հարևանը շարժուեց իրան ցեղին յատուկ գանգատկոտութեամբ, մի զննողական հայեացք գցեց նորա վերայ ու դուրս գնաց բեռնաւորուած իւր խուրջինով։ Մուշեղը դէպքից օգտուելով, հանեց գրպանից ատրճանակը ու ուզեց բաց պատուհանի մօտ ստուգել, թէ արդեօք լի՞ քն է. և դեռ նոր էր քաշում զսպանակը, երբ գնացքը կանգ առաւ մեծ թափով ու Մուշեղը կորցնելով հաւասարակշռութիւնը, յետ մղուեց, պատուհանից և վայր ընկաւ. ատրճանակն ինքն իրան բացուեց։ Ցիրաւի, այդ ժամանակ մի ինչ որ ծայն, մի պայթիւն լսուեց, բայց այդ կարելի էր վերագրել երկաթուղու սուր ճիչերին ու դղրդոցին, որը շնչասպառ մարդու նման իսկոյն կանգ առաւ կայարանի առաջ։

Մուշեղը բոպէաչափ, սրտատրոփ, մէկ դիրքի մէջ պառկած, սպասում էր թէ արդեօք ի՞նչ ելք կունենայ իւր այդ արկածը. իսկ երբ հաւաստիացաւ թէ իրան հետևող չկայ, շարժուեց. բայց մի անտանելի ցաւ զգաց թևի մէջ, որի վերայ վայր ընկնելիս յենուել էր ամբողջ մարմնով. բարեբաղդաբար նորա տեղը կայարանի հակառակ կողմն էր, այնպէս որ անտեսանելի էր անցորդների աչքից, մանաւանդ որ մութ գիշեր էր, մի աստղ անգամ չէր երևում երկնքի երեսին։ Նա մի կերպ ոտքի կանգնեց, զգուշութեամբ փաթաթեց ցաւած թևը և ծուխ, մուխն անցնելուն պէս, կարծես քիչ-քիչ հանգստանում էր ու ուրախանում որ փորձանքից ազատուեց, երբ օ, յուսահատութիւն, յանկարծ նա նշմարեց լուսամուտի կողքին ատրճանակի գնդակով ծակուած մի տեղ, որ տանում էր դէպի հարևան կուպէն։ Ցուզմունքով նա վեր բարձրացրեց գոշակը, զննեց և սառած մնաց. էլ կասկած չկար, որ գնդակն ուղղակի

հասել էր միւս կուպէն և անշուշտ դիպել այնտեղ գտնուող տիկնոջն ու փոքրիկ երեխային:

Մուշեղը մոռացաւ թեւի պատճառած ցաւը. այժմ նորա կոկորդն էր սեղմւում, գլուխն էր այրւում և յուսահատութեան մէջ, շունչը բռնած, դառել էր մարմնացած լսողութիւն. ուզում էր իմանալ, լսել գոնէ մի մարդկային շշուկ, բայց այն կուպէից ոչ մի ձայն, ծպտուն չէր լսւում: Մուշեղը մաղերը փետուում էր, կսկիծը կարտում էր նորա աղնիւ, ղդայուն սիրտը՝ «ի՞նչպէս, իմ անզգուշութիւնից մեռան մի նորատի տիկին ու մի փոքրիկ մանուկ, թերևս այդ բոպէին մօր կենսատու սաինքին փարուած. Աստուա՜ծ իմ, այս ի՞նչ պատուհաս էր, ես զրկեցի նոցա ծաղիկ հասակից, ես իմ մի գնդակով ոպանեցի երկու անմեղ արարածներ. բայց ինչո՞ւ, ինչո՞ւ այս ամենը...»: Եւ նա խելագարի նման խփում էր իւր կրծքին, նորից մօտենում էր պատին, նորից ականջ դնում, բայց աւա՜ղ, ոչ մի թոյլ շշուկ այն կողմից... քանի դնում, աւելի ևս լարւում էր նորա երևակայութիւնը. նա կարծես տաք արեան հոտ էր առնում, կարծես իր ոտքերը թաղուած էին զոհերի լճացած արեան մէջ. նա աչքերը լայն բացած, վեր էր թռչում, կանգնում բազմոցի վերայ, որպէս զի ազատէր խրուած ոտքերն այդ լճակից... Այդ միջոցին կարծես նորա ուղեղը քարացել էր, չէր կարողանում ոչ մի ելք գտնել այդ դրութիւնից դուրս գալու և միայն նորից ու կրկին անդամ մօտենում էր հարևանի պատին ու ինքն իրան մրմնջում. «անիծուած երեխայ, երեկ ամբողջ գիշեր քս լացով ինձ չէիր թողնում քնել, իսկ այսօր քո լռութիւնն ինձ անտանելի է. աղաչում եմ, լաց, ճչա, օրօր ու նանիկ պահանջիր, աղաղակիր որչափ սիրտդ կուզէ, միայն թէ դիտենամ, որ դու կենդանի ես...» Բայց զո՞ւր, դարձեալ մեռելային լռութիւն և այս անդամ արդէն բոլորը, ամբողջ գնացքը կարծես խօռք էին կապել խոր քնի մէջ ընկղմուելու և միայն լսելի էր շոգեկառքի միակերպ հեռոյը մութ, մառախլապատ կէս գիշերին:

Եւ Մուշեղը, որ իւր հայրենիքում եղբայրասպան կոտորածի օրերին շարունակ անծնաղոհ կերպով միւս կարիճների

հետ միասին մահն աչքի առաջ կուգում էր, այնքան չէր մոռանալ ու տառապել, որքան այս մեկ գիշերուան մէջ։

Վերջապէս արշալոյսի ծիրանեգոյն շողքերը հեռուից սփռուեցան հորիզոնի վերայ. այդ բարերար լոյսի հետ միասին Մուշեղի խառնաշփոթ մտքերն էլ կարծես պարզուում էին, կարծես նորա գիտակցութիւնը սկսում էր գործել։ Նա այլևս գիշերուան խելակորոյսը չէր. նա մխիթարում էր ինքն իրան. դուցէ թէ չեն փնտռուած, դուցէ զնդակը դէմ է առել պատին ու մնացել։ Այդ յուսատու մտածմունքների միջոցին երեւաց կօնդուկտորը, և Մուշեղի մտքով կայծակի արագութեամբ մի բան անցաւ... ու կանգնեցնելով նորան՝ ասաց. «խնդրեմ իմ հարեւան կուպէն բացէք և տիկնոջից խնդրեցէք օդրկոլոն. ասացէք գլուխս սաստիկ ցաւում է, դուցէ բարի լինի ասայ»։ Կօնդուկտորը դուռը դեռ նոր էր բաց անում, երբ ներսից երեխայի ձայնը լսուեց. Մուշեղը քիչ մնաց գրկէր, համբուրէր կօնդուկտորին, բայց իրան զսպեց. նորից այլայլուեց. իսկ տիկնոջը... մի դուցէ... նա... Բայց ահա լսելի եղաւ և մի կանացի մեղմ ձայն ու կօնդուկտորն օդրկոլոնի սրուակը ձեռքին ներս մտաւ Մուշեղի մօտ. սա ուրախութիւնից այնքան շփոթուած էր, որ հարցրեց. «ուրեմն կենդանի՞ են նոքա». կօնդուկտորը զարմացած նայում էր, երբ Մուշեղը զգալով իւր սխալը. իսկոյն վրայ բերեց. «ես ուզեցի ասել զարթե՞լ են նոքա»։

Հիմա արդէն բաւականաչափ հանդուցացած էր մեր երիտասարդն իւր գիշերուայ վշտից ու մտատանջութիւնից. ահ, անմոռանալի՜, զարհուրելի՜ մի գիշեր էր այն... Այժմ մնում էր իմանալ, տեսնել թէ արդեօք զնդակի տեղը չի՞ երևում հարեւան կուպէում. չէ՞ որ, մտածում էր Մուշեղը, եթէ նկատուի, տիկինն անկասկած կը յայտնէ այդ մասին և ապա կրսկսուի քննութիւն, խուզարկութիւն, այդ դէպքում ես կորած եմ... Նա արդէն հոգեպէս չափազանց շատ էր տանջուել, և էլ չէր կարող դիմանալ նորանոր կասկածներին, մանաւանդ որ դեռ կէս օր էլ ճամբայ ունէր շարունակելու նոյն գնացքով և Մուշեղն էլ չհամբերեց, դուրս եկաւ իւր կուպէից, մօտեցաւ տիկ-

նոչ դրանն ու կամացուկ բաղխեց. «Թոյլ կրտամ՝ որ ներս մտնեմ և շնորհակալութեամբ վերադարձնեմ ձեր օդրկոլոնը»։ Սիրալիր տիկինը ներս հրաւիրեց, իսկոյն և եթ սկսուեց հետաքրքրական խօսակցութիւն, որի ժամանակ Մուշեղն անհանդիստ աչքերով որոնում էր չարաբաստիկ գնդակի տեղը. երեխան այդ միջոցին իւր լացն սկսեց. մայրը ստիպուած եղաւ Մուշեղից ներողութիւն խնդրել ու դուրս տարաւ փոքրիկին։ Մուշեղը մենակ մնալով՝ արագ արագ ջղածգօրէն սկսեց նայել չորս կողմը, բայց բան չէր երևում, ապա յետ տարաւ դօշակը և տեսաւ որ գնդակն յիրաւի իւր կուպէի լուսամուտի կողքը ծակելով անցել էր այդ կողմի պատի մէջ ու մնացել հաստ դօշակի տակ։

Երբ տիկինը ներս մտաւ, Մուշեղն էլ այն ցրուած, մոլորուած երիտասարդը չէր. կարծէք նա կերպարանափոխուել էր, կարծես մի ծանր բեռ ընկած էր նորա ուսից։

Մուշեղի ճանապարհորդութիւնն արդէն վերջանալու վրայ էր։

Հեռուից երևաց Բաղուն մշուշապատ ու կարծես դալկահար... այն կենդանի, շէն ու հարուստ քաղաքը, որը քիչ առաջ անսպառ աղբիւրն էր գործարանատէրերի և բանուոր դասակարգի համար, այժմ սաէպ կրկնուող կոտորածներից ու թալաններից յետոյ պատկերանում էր համբորդների աչքին որպէս մի խղճուկ աւերակ, մի սոսկումի վայր։

Քիչ յետոյ իրարանցումն սկսուեց, գնացքը կանգ առաւ Բաղուի դեղնաւուն կայարանի առաջ. համշարիների թրաշած ծոծրակներ էր, որ երևում էին պլատֆորմի վերայ։ Մուշեղն իւր ատրճանակներով ու փամփուշտներով լի արկղը գրկած, արագ սլացաւ այդ բազմութեան միջից դէպի ընկերները, որոնք սպասում էին այնտեղ։ Նա շտապով ասաց. «Ես անմիջապէս մեկնելու եմ հայրենիք, ուր ինձ սպասում է մահամերձ հայրս. տղէք ջան, առէք այս արկղը, յանձնէք ում հարկն է. ձեզ մատա՜ղ, յորդորեցէք ամենքին, մեծին, թէ փոքրին, մեր դարաքաշ հայ ժողովրդին զինուել ու զինուել. միայ՜ն և միայ՜ն ինքնապաշտպանութեան մէջն է մեր փրկութիւնը։

ՏԻՐՈՒՀԻ ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

ՁԳՏՈՒՄ ԵՄ

Զգտում եմ հեռուն, անսահման հեռուն,
Մրրիկն է հոգիս, թևերս՝ կայծակ.
Սիրտս յորդաբուղխ, արիւնս եռուն...
Զգտում եմ միշտ վեր՝ լազուր, կապուտակ։

Ես կը խորտակեմ իմ դէմ յարուցած
Դաւաճան բախտիս ամէն խոչընդոտ.
Կը ցրեմ իսպառ ամպը սևամած,
Կը թռչեմ հեռուն՝ գրաւիչ, աստղոտ։

Երբ յաղթանակած արգելքների դէմ
Անհունը գրկել կարողանամ ես,
Օ՜, ինչ կատաղի կռիւ պիտ սկսեմ,
Կռիւ չարի դէմ՝ լպիրշ, աներես։

Անհուն բարձունքից կրակ կը թափեմ
Չարերի գլխին՝ անսիրտ, մարդախանձ,
Վառբոց հրդեհով իսպառ կը լափեմ
Երկրի երեսից չարիք ու նախանձ։

Իմ մէջ ամփոփած ոյժը անհունի՝
Կը կերտեմ մի այլ նորաստեղծ աշխարհ,
Ուր չարն է պարտուած, ոչ մի ոյժ չունի,
Բարու դէմ կանգնած՝ խեղճ, ամօթահար...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԱԶԱՏ ԿԱՄՔ

(Ըստ Բիւխների)

Մարդը նոյնպէս է ազատ, որպէս թռչունը վանդակում. նա կարող է շարժուել միայն որոշ սահմանների մէջ։

ԼԱՖԱՏԷՐ

Շատ միամիտ է այն սին ցնորքը, թէ մարդկային կամքը անպայման ազատ է, բայց բնութիւնը նրան հպատակեցրել է մարդուն տուած ինքնապաշտպանութեան բնազդին։

ՇՆԱՅԴԵՐ

Ամեն ինչ հասկանալ՝ կ'նշանակէ ամեն ինչ ներել։

տ. ՍՏԱՅԼ

Մարդը իւր թէ մտաւոր և թէ հոգեկան էութեամբ ամենապարզ բնութեան ծնունդ է, ուստի անկասկածելի է, որ ոչ թէ նա ինքը ինչ որ կամենում է, գործում է, զգում է, այլ ինչ որ մտածում է՝ երևոյթների նոյնպիսի բնական յարաբերութիւնների և պահանջի վերայ է հիմնուած, որպէս և տիեզերքը։

Միայն մարդու և նրա գոյութեան արտաքին և ոչ գիտնական ուսումնասիրութիւնը միացած վերացական նախապաշարմունքների հետ կարող էին ստեղծել սխալ համոզմունք՝ թէ մարդկանց և ազգերի կատարած և չը կատարած գործերը բոլորովին ազատ և ինքնագիտակցական կամքի արդիւնք են։ Աւելի խոր մտածողութիւնը բերում է այն համոզմանն, որ մարդու անհատական գոյութիւնը այնքան անբացատրելի է և խիստ կերպով կապուած է ընդհանուր որոշականութեան և բնական ազդեցութիւնների հետ, որ կամայականութեան կամ

ազատ որոշման մասին կարելի է խօսել միայն շատ սահմանափակ մտքով։ Թոր դատողութիւնը մեզ ծանօթացնում է այն բոլոր երևոյթների որոշ կանոնների և օրէնքների հետ, որ մինչև այժմ կամ պատահմունքի և կամ ազատ ինքնորոշման արդիւնք էին համարւում։

Մարդկային կամքի ազատութիւնը, որ բոլոր մարդիկ դոփաբանում են, ասում է մեծ իմաստուն Սպինոզան, կայանում է միայն նրանում, որ մարդիկ գիտակցում են իրենց ցանկութիւնը, բայց չեն հասկանում այն շարժառիթները, որ նրանց ցանկալ է ստիպում։

Միայն վերջին ժամանակներում գնահատեցին վիճակագրական գիտութեան արժէքը, բայց ստատիստիկան արդէն ապացուցել է թէ շատ երևոյթներ տեղի են ունենում խիստ որոշ օրէնքների հիման վերայ, իսկ ինչու այժմ այդ երևոյթները պատահմունքի կամ կամայականութեան արդիւնք են համարւում, եթէ օրինակ ստատիստիկան ապացուցել է, որ միևնոյն հանդամանքներում և որոշ ժամանակուայ մէջ միևնոյն թիւ սպանութիւններ, ինքնասպանութիւններ, գողութիւն, պսակ և այլն են կատարւում, ուրեմն ակամայից այսպիսի երևոյթները պատահմունքից չեն առաջ գալիս, այլ որոշ կանոններով կամ բնական ինքնորոշումով են բացատրւում։ Միմիայն անհատական և մասնաւոր երևոյթները քննելիս մենք դժուարանում ենք այս ճշմարտութիւնը հասկանալու, բայց ընդհանուր և ամբողջական երևոյթների համար միշտ պարզւում է մի այնպիսի կարգ, որ մարդկութեան և մարդու վերայ անխուսափելի կերպով է իշխում։ Այժմ արդէն բժիշկների և գործնական հոգեբանների մեծամասնութիւնը ընդունում է, որ մարդկանց գործողութիւնները վերջ ի վերջոյ մի յայտնի և որոշ բնական կարևորութեան արդիւնք են։ Այս կ'նշանակի, որ մարդկանց գործերը ծագում են արտաքին ազդեցութիւնների տակ և ամեն մի առանձին դէպքում ազատ ընտրութեան համար շատ նեղ շրջան է մնում կամ բոլորովին ոչինչ չէ կատարւում ազատ ընտրողութեամբ։

Մի քանի փաստեր բոլորովին բաւական կլինեն ապացուցանելու, թէ ինչ է գոյութեան բնական աշխարհակարգը։ Մարդու

կամքի վերայ տիրապետող ազդեցութիւնները, որոնք նրա կատարած ու չը կատարածներին յայտնի սահման են դնում, երեք կարգի են բաժանւում։

Առաջին և ամենազօրեղ ազդեցութիւնը բղխում է մարդու անհատական կազմուածքից, նրա մարմնաւոր և հոգեկան տրամադրութիւններից, բնազդումներից ու բնաւորութեան սպմից, այսինքն ըստ մեծի մասին ժառանգած ծնողներից և նախնիքներից։ Այս բոլոր ոյժերը այնպէս են ազդում մարդու վարմունքների վերայ, որ ազատ ընտրողութեան համար կամ բոլորովին տեղ չի մնում կամ շատ սակաւ է մնում։ Երկրորդ ազդեցութիւնը կախուած է կրթութիւնից, դարգացումից և օրինակից, որոնք ներգործում են բնածին յատկութիւնների վերայ կամ դէպի լաւը կամ դէպի վատը և նոյնպէս խիստ սահմանափակում են մարդու կամքը։

Երրորդ տեսակ ազդեցութիւնները բղխում են միջավայրի այն շրջանի կամ մթնոլորտի պարագաներից, ուր մարդս ապրում է և պիտի ապրի։

Միջավայր պէտք է համարել երկիրը, հողը, կլիման, ընդհանուր բնական երևոյթները, բայց և սովորութիւնները և բարքերը, քաղաքական-սոցիալական պայմանները, դիտութեան և դարգացման աստիճանը բնորոշող առանձնայատկութիւնները, ժողովրդի, ապրուստի միջոցները և կենցաղավարութիւնը, վերջապէս, մարդու կամքի վերայ ազդեցութիւն ունի անձնական հանգամանքները, որպէս, առողջութիւնը, սնունդը։ հարստութիւնը կամ չքաւորութիւնը, ունևորութիւն կամ չունևորութիւնը, հասարակական դիրքը, բաղդաւորութիւնը և այլն։ Այս պատճառով, մարդը իւր վարմունքների մէջ հպատակ է բոլորովին նոյն բնական օրէնքներին, որպէս նրանից ցածր կենդանի բնութիւնը։ Որպէս ամեն մի բոյսի զոյութիւնը, նրա մեծութիւնը, արտաքին դիրքը, գեղեցկութիւնը, կենսական ոյժը կախուած է բացի ժառանգական յատկութիւններից և այն հողից, ուր նա բուսել է, նրա ծծած օդից և նրան ջրող անձրևից, որպէս իւրաքանչիւր կենդանի նրան շրջապատող ներքին և արտաքին պայմանների արդիւնք է,

նոյնպէս և մարդը իւր ֆիզիքական և հոգեկան յատկութիւններով արտաքին և ներքին ազդեցութիւնների, պատահմունքների, նախատրամադրութիւնների արդիւնք է և այսպիսով նա այն հոգեկան թնկկախ և ազատ ընտրութեան ազատ էակը չէ, որպէս նրան երևակայում են փիլիսոփաները և բարոյագէտները։ Այն մարդը, որ ընծին բարի տրամադրութիւններով, կարեկցող հոգով, խղճով և արդարասիրութեամբ համակուած աշխարհ է գալիս—նա սակաւ բացառութեամբ դառնում է իսկական բարոյագէտ, եթէ միայն վատ կրթութիւնը, կեանքի անառողջ պայմանները ոյժով չեն խեղդել, ոչնչացրել այդ յատկութիւնները.—բայց ընդհակառակը ոչ մի կամք ընդհանրապէս երբէք չէ կարող դադարել, յաղթահարել մելամաղձոտութիւնը, ծուլութիւնը, թեթևամտութիւնը, սնափառութիւնը, մեծամտութիւնը, ժլատութիւնը, հեշտասիրութիւնը, արբեցողութիւնը, խաղը, և դէպի բռնութիւն ունեցած տրամադրութիւնը։

Առօրեայ փորձը ապացուցանում է մեզ շատ պարզ կերպով, որ իւրաքանչիւր անհատ գործում է ըստ իւր բնաւորութեան և ներքին ձգտման և մեր բնութեան ժառանգած ու ընծին ձգտումները և բնազդները մեր վճիռների և գործերի վերայ ըստ մեծի մասին այնպիսի ազդեցութիւն են անում, որ հաւատի կամ մտածողութեան ազդեցութեան համար ոչինչ չէ մնում։ Մարդկանց վարմունքները, ասում է Աուէրբախ, նրանից չէ կախուած, թէ նրանք ինչ են մտածում Աստծու մասին, այլ նրանք վարւում են իրենց ներքին ներշնչումների և սովորութիւնների համեմատ։ Շատ անգամ մարդ շատ լաւ իրեն ճանաչում է, գիտէ իր հոգեկան յատկանիշները, գիտէ իւր արած սխալները, բայց էլի չի կարողանում յաջողութեամբ մաքառել իւր ներքին հնչման դէմ։ Նա միշտ նոյն սխալները կրկնում է, նոյն դժուարութիւններն է ստեղծում իւր համար, որովհետև միայն բացառիկ դէպքերում դաղափարական կամ մտքի շարժառիթները կարողանում են յաղթել զգայմունքի կամ սովորութիւնների շարժառիթներին։

Երիտասարդ հեշտասէր մարդը ամեն բան զոհում է սիրոյ առարկայի համար, ժլատը փող դիզելու ցանկութեան,

ծոյլը հանգստութեան և աշխատանքից փախչելուն, փառասէրը իւր կրքին է զոհում ամեն բան և այլն և այլն։ Բնածին կիրքը յաղթում է բոլոր զաղափարներին, չի լսում դատողութեան ապացոյցներին և ոչ մի վտանգ հաշուի չէ առնում։ Բարկացկոտ մարդը դրդռուած ժամանակ այնպիսի վարմունք է ունենում, որին ընդունակ չէ հանդիստ դրութեամբ։ Ողորմած և բարեսիրտը զոհում է իւր շահերը և նոյն իսկ իւր անձը ուրիշներին բարիք անելու համար, իսկ խստասիրտ մարդու վերայ ոչ մի ազդեցութիւն չեն անում ոչ մի տանջանք, ոչ մի աղերսանք և թշուառութեան ամենասոսկալի տեսարանները։ Մնափառութիւնը, փառամոլութիւնը, զովարանուելու ծարաւը կարող են մեծամեծ յանցանքների, բայց նոյնպէս յաջողութիւնների պատճառ դառնալ։ Բացի այն, որ մարդու դործերը և վարմունքները կախում ունեն նրա ներքին էութիւնից, նրա անհատական բնութիւնից, ամեն մի դէպքում զօրեղ կերպով ազդում են նրա վերայ կամքի ազատութեան սահմանափակող բնական պայմանները։ Ում յայտնի չէ, որ մեր վճիռներից շատերը շատ անգամ եղանակի տպաւորութեան տակ են առաջ գալիս և շատ անգամ պատահական և անցողական դէպքերի ծնունդ են լինում։

Յայտնի է նոյնպէս, որ մեր ֆիզիքական դրութիւնը շատ մեծ չափով և անդրժելի ազդեցութիւն ունի վճիռների և դործերի վերայ։

Երիտասարդ մարդը, ասում է Կրամեր, այլ կերպ է մտածում քան ծերունին, քաղցածը ու կուշտը այլ, բարկացած ու հանդիստ մարդը այլ կերպ։ Մարդու այս կամ այն անդամի տկարութեան և այլ հիւանդութիւնները նոյնպէս դեր են խաղում մեր կեանքում։ Այսպիսով մեր ամբողջ կեանքը բաղկացած է պահանջից և ազատութիւնից, բայց շաղկապուած միմեանց հետ։ Դեռ հանճարեղ Պլատոնը ասում էր, որ յանցանքների պատճառները անկրթութիւնը, զարգացման պակասութիւնը և պետութեան վատ կազմակերպութիւնն է։ Յանցանքները և խելագարութիւնը անբնական բաներ չեն, այլ որոշ պատճառների և պայմանների արդասիք։

Միևնոյն համոզման են եկել բժիշկ Ֆլէյշը, Գարաֆալան և Լամբրոզօն, որոնցից վերջին երկուսը ասում են, որ կայ մինչև անգամ յանցաւոր մարդու առանձին տիպ և այս տեսակ մարդիկ յիշեցնում են մարդկութեան վայրենի և նախնական դրութիւնը։ Այս պատճառով արդարացի են հանճարեղ տիկին Ստայլի խօսքերը թէ «Ամեն ինչ հասկանալ կը նշանակի ամեն ինչ ներել»։ Գուցէ մի քանի դարերից յետոյ, երբ մարդկութիւնը աւելի իմաստուն և բաղտաւոր կը լինի, մեր ներկայ քրէական դատերին նոյնպիսի զգացմունքով կը վերաբերուին և նոյնպիսի կարծիք կունենան, որպէս մենք նայում ենք միջնադարեան դատերին, որ կատարւում էին կախարդների վերաբերմամբ։

ԳԱՐ. ԵՆԳ.

ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԿԱՐԼ ԼԱՄՊՐԵԽՏԻ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Պատմագիտութիւնը ԺԲ դարում յատկապէս քննութիւնների ու տաք վիճաբանութիւնների առարկայ է դառնում, որովհետև շատերը նրա գիտութիւն լինելն իսկ ժխտում են և դեռ ցայսօր էլ ժխտում են, ուրիշներն էլ պաշտպանում էին նրա իրաւունքը իրենց սուր ու խորիմաստ ուսումնասիրութիւններով։ Այս պայքարի հետևանքն եղաւ պատմագիտութեան բոլորի լուրջ ուշադրութեան առարկայ դառնալը և բնականաբար նա արագ քայլերով զարգացաւ։ Օգուտ քաղելով միւս գիտութիւնների (հոգեբանութիւն, տնտեսագիտութիւն, իրաւագիտութիւն և այլն) ձեռք բերած գիտական օրէնքներից, պատմութիւնը ընդարձակեց իւր ուսումնասիրութեան շրջանը մինչև այն աստիճան, որ ընդգրկեց իւր մէջ համարեա ամեն ինչ և դարձաւ մի տեսակ հանրագիտակ (էնցիկլոպէդիկ) գիտութիւն։ Նրա ուսումնասիրութեան նիւթը այլ ևս միայն քաղաքական դէպքերը ու նշանաւոր հասարակական երևոյթները չէին, այլև ժողովրդի, ազգի կուլտուրան, իսկ կուլտուրան մի ազգի ամբողջ գործունէութեան, ունեցած կեանքի նիւթական ու հոգեկան արժէքների գումարը, ամփոփումն է։ Պատմութեան նիւթը կուլտուրան դառնալով անհրաժեշտօրէն նա իւր ուսումնասիրութեան մէջ գործ պիտի ունենար ժողովրդի կամ ազգի քաղաքական, տնտեսական, իրաւական ու հոգեկան երևոյթների հետ. իւր ուսումնասիրութիւնը լուրջ ու գիտականօրէն առաջ տանելու համար պէտք է կարիք զգար օգտուելու յիշեալ գիտութիւնների տուածներից, Պատմութիւնը իւր հերթին ազդեց միւս գիտութիւնների վրայ ուսումնասիրութեան նոր մեթոդ մշակելով. մնացեալ բոլոր գիտութիւնները իրենց ուսումնասիրութեան նիւթի ամբողջական քննութեան համար դիմում էին պատմական

մեթոդին. իրենց նիւթը պարզաբանելու համար ուսումնասիրում են նրա պատմական զարգացումը։

Անցեալ դարու խոշոր դէպքերը նմանապէս գիտական աշխարհի ուշադրութիւնը հրաւիրեցին պատմագիտութեան վրայ։ Պատմութեան մէջ գործող ոյժերի վերլուծութիւնից առաջ եկան տարբեր ուղղութիւններ հասարակական կեանքը ղեկավարելու համար. պատմութեան ուսումնասիրութիւնը դարձաւ անժխտելի անհրաժեշտութիւն քաղաքական կուսակցութիւնների համար։ Սը-բանցից ամեն մէկը իւր աշխարհայեացքը գիտականօրէն պաշտպանելու համար սկսեց հնարաւորութեան չափով լրջմիտ ուսումնասիրել պատմութեան մէջ գործող ոյժերը։ Այս կուսակցութիւնները մեծ մասամբ երկու խոշոր, տարբեր աշխարհայեացք պաշտպանող ուղղութիւնների են բաժանւում՝ մատերիալիստական և իդէալիստական, որոնց պայքարը դեռ այսօր էլ չի վերջացել։ Պէտք է խոստովանուել, որ երկուսի մէջ էլ կային ծայրահեղութիւններ, մանաւանդ առաջինի մէջ, որը հետզհետէ սրբագրեց իւր թերութիւնները և մեղմացրեց երկաթէ կոչուած օրէնքների դաժանութիւնը։ Պատմագիտութիւնը այսպիսով կապուելով հասարակական, կենսական հարցերի պարզաբանութեան խնդրի հետ առաւել ևս հետաքրքրութեան առարկայ դարձաւ և այսօր ամեն մի ինքնագիտակ մարդու համար հասարակական խնդիրներում լրջմիտ մասնակցելը պայմանաւորւում է պատմութեան հետ լուրջ ծանօթանալովը։ Միւս կողմից պատմագիտութեան այսպէս ասած գործնական նպատակներին անմիջապէս ծառայեցնելը թուլացրեց նրա գիտական արժէքը. այս չարիքի առաջն առնելու համար յատկապէս կարիք է զգացւում պատմագիտութեան մասին լուրջ դիտողութիւններ անել և ցոյց տալ, որ պատմագիտութեան գործնական, ժամանակակից նշանակութիւն ունենալն իսկ պահանջում է մօտոյ ծանօթանալ խնդրի հետ, լրջմիտ վերաբերուել։ Պատմութեան մատուցած այս խոշոր ծառայութիւնը առաւել ևս կրկնապատկւում է, եթէ ի նկատի ենք ունենում, որ մեր, անցեալի շարունակութիւն, ներկան հասկանալու ու գնահատելու համար պէտք է դիմենք պատմութեան օժանդակութեանը։ Իւրաքանչիւր մարդ որոշ աշխարհայեցողութեան տէր լինելով է մի ամբողջութիւն դառնում և միաժամանակ գործօն ոյժ։ Այս նպատակը իրականանում է նաև պատմագիտութեան միջոցով։

Վերոյիշեալ պայմանները ի նկատի ունենալով թարգմանեցի այս փոքրիկ, բայց լուրջ աշխատութիւնը։ Հեղինակը, Վայցիգի նշանաւոր ուսուցչապետը, Գերմանիայից դուրս էլ հռչակ է վայե-

լում իբր ուրոյն աշխարհհայեցողութեան տէր և նոր ուղղութիւն մշակող պատմաբան։ Իւր նոր ուղղութեամբ նա ուսումնասիրել է հեղինակին պատիւ բերող «Գերմանիայի կուլտուրայի պատմութիւնը» բազմահատոր գրուածքը, որը իւր տեսակի մէջ առաջինն է։ Հռչակաւոր պատմաբանի աշխարհհայեցութեան ու ուղղութեան եղանակի համառօտակի ամփոփումն է այս գրուածքը։ Մեզ հայերիս համար յատկապէս պէտք է հետաքրքրական լինի այս աշխատանքը, որովհետև թէ հասարակական կեանքում թէ պատմական ուսումնասիրութիւններում շատ յետամնաց ենք։ Յոյս ունիմ սրանով սէր զարթեցնել դէպի պատմութիւնը ընդհանրապէս և եռանդ ներշնչել մեր մտաւորականներին սկսել մեր ազգային պատմութեան ուսումնասիրութիւնը, որի կարիքը խիստ զգալի է թէ մեր դպրոցներում և թէ մեր հասարակական ծանրակշիռ խնդիրների պարզաբանութեան դէպքում։*)

ԹԱՐԳՄԱՆԻՉ

Այս գրքոյկով ողջունում եմ ովկիանոսի միւս կողմի երիտասարդ աշխարհը, որի հիւրասիրութիւնը վայելել կարողացայ վերջին ամիսներում և որի նախաձեռնութեանն են պարտական մասամբ հետևեալ տողերը իրենց ծագմամբ. ողջունում եմ «ապագայի երկիրը»։ Հայրենիք վերադառնալով բոլորովին այլ կերպ զուարթ ողջունում եմ իմ հայրենիքը և իմ ամենաերջանիկ անցեալի երկիրը՝ Հռենոսը և նրա լեռներն ու հովիտները։ Թէև այսօր յիշողութեանս մէջ գեղեցկացած, բայց ուսանող երիտասարդութեան քնչ երջանիկ օրեր էին, որ հրաշալի, գուցէ և յիրաւի պատմաբանների համար թանկագին, գերմանական երկրում ունեցել եմ։ Ժամանակակից նման ընկերներս հեռու ցրուած են ամբողջ աշխարհում։ Բայց դեռ Հռենոսի ափին շատ սիրելի ընկեր ապրում է, շատ շատերը հներից, անցեալ դարու սերունդներից, որոնց, մեծ ժամանակի ականատեսներին, միշտ առանձնապէս մօտ եմ եղել, որոնց մէջ երջանիկ ճակատագրի շնորհիւ ոչ միայն հասարակական, այլ և ճշմարիտ ընկերներ եմ գտել։ Ողջունում եմ ձեզ բոլորիդ. յարգանք նրանց յիշատակին, որոնք այլևս չեն գործում։

Կ. ԼԱՄՊՐԵԽՏ

Նիւ-Եորկ
1 Նոյեմբ. 1904

---

*) Թարգմանութիւնը ազատ է եղել մի քանի տեղերում մտքի պարզութեան համար։

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՒ ՆԵՐԿԱՅ ԲՆՈՅԹԸ

—

Նորագոյն պատմագիտութիւնը նախ և առաջ մի սոցիալ-հոգեբանական գիտութիւն է։ Այն պայքարը, որը դեռ ներկայումս էլ պատմական գիտութեան հին և նոր ուղղութիւնների մէջ շարունակւում է, վերաբերում է ամենից առաջ այն բանին, թէ սոցիալ-հոգեբանական գործօնները ի՞նչ նշանակութիւն ունին պատմութեան մէջ անհատական հոգեբանականների վերաբերմամբ. մի քիչ պակաս որոշակի ասած, թէ ի՞նչպէս պէտք է ըմբռնել դրութիւնները մի կողմից և հերոսներին միւս կողմից իբրև պատմական ընթացքը շարժող ոյժերի։

Այս պայքարում նոր, առաջանցնող և աւելի ընդգրկող տեսութիւնը սոցիալ-հոգեբանականն է, ուստի կարելի է հէնց այդ էլ իբրև նորագոյնը նկատել։ Անհատական հոգեբանականը ընդհակառակը հինն է, նա, որը նկատւում է նախ և առաջ բաւական երկար ժամանակ անվիճելի և բազմաթիւ պատմական դրուագքներում իրեն ազդեցութեամբ լաւ ամրապնդուած դիրքը պաշտպանող։

Արդ, ի՞նչ է այս հակառակութիւնների պատճառը։ Անձնական քմահաճո՞յքը, եղակի հեռազօտողի առանձնայատուկ կերպով օժտուած լինե՞լը։ Յետադիմական ղգացմո՞ւնքը ընդդէմ այս կամ այն սկզբունքի վերաբերմամբ եղած նախկին չափազանցութիւնների։ Ուրիշ հոգեկան հոսանքներով՝ օրինակ փիլիսոփայական կամ բնական գիտութեան պատմագիտութեան գունաւորո՞ւմը։ Սրանցից և ոչ մէկը. մենք կանգնած ենք պատմագիտութեան ներսից բղխող, նրա ընթացքի մի կարևոր փոփոխութեան առաջ, որը իւր հերթին ընդհանրապէս նորագոյն

հոգեկան կեանքի խորը փոփոխութիւնների մի արտայայտութիւն է։

Այստեղ կատարուող այս ընթացքը հասկանալու համար պէտք է յիշել հետևեալ պատմական հակադրութիւնները։

Նախ մի ժամանակ, երբ բոլոր մարդիկ համեմատաբար փոքր, մարդկային համայնքներում, օրինակ ապագայ ազգային սկզբնական կազմութիւններում, հոգեպէս բացարձակապէս նման են լինելու. այնպէս որ նրանք իրենց գործելու և զգալու մէջ ինչպէս միևնոյն կազմութեան օրինակներ իրար մօտ են գործում։ Յետոյ էլ մի ուրիշ ժամանակ, երբ շատ ընդարձակ չափ ունեցող մարդկային մի համայնքում իւրաքանչիւրը միւսից այլ կերպ է կազմուած լինելու այն ձևով, որ—աւելի ուժեղ քան ներկայումս է—նրա կամենալն ու զգալը իւր ընկերներից ամեն կերպ տարբերուում է։

Պարզ է. մենք ներկայացրինք մարդկային հոգեկան կեանքի երկու ծայրերը. սրանց ազդեցութիւնները, այն դիտողութիւնների համար, որոնք ծեռնարկուելու են այս ծայրերի մէջ ժամանակի ընթացքում կատարուող, այսինքն պատմական հոգեկան կեանքի վերաբերմամբ, շատ տարբեր են լինելու։ Առաջին դէպքում դիտողութիւնը պէտք է միայն մէկի կեանքի նկարագիրը տայ, որովհեաև բոլորի հոգեկան կեանքի դիտողութիւնը աւելի բան չէր տայ, բայց եթէ մի դումար, որը արդէն յայտնի էր. եղակի հոգեկան կեանքն է այդ։ Երկրորդ դէպքում պէտք է ի հարկէ նախ եղակիի հոգեկան կեանքը ի նկատի առնուի. բայց շուտով կերևայ, որ այդ դեռ չի նշանակում, թէ իւր մէջ բոլորի հոգեկան կեանքի բնաւորութիւնն է կրում. աւելի շատ կերևայ, որ ընդհանուրի հոգեկան կեանքը, որը իւր մէջ ունի եղակիների իրարից տարբերուող հոգեկան կեանքի արտայայտութիւններ, բոլորովին մի այլ բան է, իւր յատուկ հոգեկան՝ սոցիալ-հոգեկան բնաւորութիւն ունի, որ եղակիի հոգեկան գործունէութիւնը ընդհանուրի հոգեկան կեանքին այնպէս է ստորադասուած, որ նա իւր բարձր ու լաւագոյն արտայայտութիւններումն էլ ենթարկուած է վերջինիս։

Երևում է, որ իրար մօտ ապրող, հոգեպէս բոլորովին նոյն անհատների առաջին դէպքի դիտողութիւնից ստացւում է միայն անհատական հոգեբանական պատմական հասկացողութեան եղանակ. երկրորդ՝ իրար մօտ ապրող բացարձակապէս շերտաւորուած անհատների դէպքի դիտողութիւնից ստացւում է հիմնաւորապէս սոցիալ-հոգեբանական պատմական հասկացողութեան եղանակ։

Այս երկու առաջարկած դէպքերը, սակայն, իրականութեան մէջ երբէք կատարելապէս ներկայացրած ձևով երևան չեն դալի։ Աւելի շատ նրանց մէջ եղած կապերը տալիս են պատմական ընթացքի և պատմագիտութեան համար սկզբունքներ. իրար նման անձնաւորութիւնների դէպքը և անհատական պատմական հետազօտութիւնը կուլտուրայի սկզբնաւորութեան համար ծառայում է իբրև սկզբունք ցածր կուլտուրայի, իսկ ոչ նման անձնաւորութիւնների և սոցիալ-հոգեբանական հասկացողութեան դէպքը երևում է իբրև հիմք բարձր կուլտուրայի։ Սրանց պատճառը այն պարզ հիմքն է, որ կուլտուրայի զարգացումը մարդկային հոգու մղումն է աւելի շերտաւորման և միաւորման։

Զուտ հոգեբանօրէն նայած, մինչև այժմ արած նկարագրութիւններից երևում են զարգացման ամենացածր աստիճանից սկսած մինչև ամենաբարձրի պատմական հետազօտութեան ուղղութիւնները, որոնց և համապատասխանում է յիրաւի երկրի վրայ ամեն տեղ եղած պատմական նկարագրութիւնն ու պատմագիտութիւնը, միշտ սկսւում է պատահածի անհատական հոգեբանական մշակութիւնից և վերջապէս դալիս է մեծ մասամբ սոցիալ-հոգեբանական հասկացողութիւնը։ Երկու բնորոշ խօսքով ասած, այս ընթացքն է հերոսների առասպելների կուլտուրական պատմութեան հասնելը։

Նկարենք այս պատմական զարդացման ընթացքը մի փոքր աւելի բազմազոն և մանրամասն. այստեղ կստանանք նախ մի, ամենքին յայտնի իրողութիւն, որ ստորին կուլտուրաները իրենց համար բնորոշ պայմանների մասին նոյնքան քիչ հասկացողութիւն ունին, որքան և այդ պայմանների և ուրիշ կուլ-

տուրանների պայմանների մէջ եղած տարբերութեան մասին։ Նոյնիսկ միջին դարու վերջերի Անգլիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի և մանաւանդ Գերմանիայի բանաստեղծը դասական ժամանակի նիւթը մշակում էր և դնում անգիտակցօրէն իւր ժամանակի պայմանների տակ։ Էնէասը դառնում է ասպետ. Դիդօն—դղեակի տիրուհի։ Միայն նոր ժամանակների սկիզբը, մեռնող միջնադարի դարերը կարողացան մի լուսաբանող ըմբռնողութիւն տալ զանազան կուլտուրական պայմանների տարբերութիւնների վերաբերմամբ և այսպիսով նաև մեր ըմբռնողութեանը մի աւելի պարզաբանուած միտք՝ կուլտուրական ժամանակի պատմական տարբերութիւնը հասկանալու։ Նման դիտողութիւններ կարելի է անել նաև. դասական աշխարհում և արևելեան ասիական կուլտուրաներում։ Ամեն տեղ էլ սոցիալ-հոգեբանական պատմական ըմբռնողութեան սկիզբը լինում է մի այնպիսի ժամանակում, երբ անհատը միջնադարեան կաշկանդուած դրութիւնից իրեն ազատագրում է, որպէս զի, այսպէս ասած, նոր ժամանակը սկսելու հետ շերտաւորման արագ ընթացքը սկսի։

Այս վայրկեանից առաջ, սակայն, ամեն տեղ էլ դեռ շատ դարեր են անցնում, երբ պատմութիւնը հասկացւում է իբրև զուտ անհատական հոգեբանական, զուտ արդիւնք որոշ եզակի անհատների։ Այս բանին համապատասխան մեզ հասած պատմական նիւթը զուտ անհատական է։ Սկզբում համարեա թէ ամեն տեղ պատահող և իբրև տիպիկ նկատուած ձևեր երևում են երկուսը՝ պատմական անցքերի ցանկը և հերոսների մասին կազմուած աւանդութիւնը։

Շատ նշանակալից սկզբնաւորութիւն։ Ո՞րտեղից է այս երկուութիւնը։ Երկու դէպքումն էլ խնդիրը վերաբերում է եզակի անձնաւորութիւնների, առանձնապէս նախահայրերի յիշատակութեանը։ Բայց մի դէպքում յիշատակութիւնը բոլորովին պարզ, պրօզայիկ է, սերունդների բնական յաջորդականութեան իրողութեան յիշատակութիւնն է։ Միւս դէպքում եզակի անձնաւորութիւնը առաջ է քաշւում և նրա գործերը բանաստեղծական ձևերով, այլև բովանդակութեան չափազան-

ցութիւններով յաւերժացու�է։ Ի՞նչից է առաջ գալի այս տարբերութիւնը։ Մենք տեսնում ենք պատմական դիտողութեան ձևի մի հիմնական բաժանումն, որ ինչպէս բարձր, նոյնպէս և ցածր կուլտուրայի ամեն ժամանակներում հանդէս է գալիս։ Սրանց կարելի է անուանել նատուրալիզմ և իդէալիզմ։ Առաջին դէպքում մարդ իրականութեանը մօտ է կանգնած, հոգեպէս նրան բոլորովին մօտ է և նկարագրում է միայն այն։ Սրան պատկանում են անմիջական ու շատ արձանագրութեան ձևերը. այժմ նման բաներ են օրաթերթերը, որոնք կոչուած են տարեգրութեան ձևով հաղորդելու լուրերը և statistikան։ Միւս դէպքում աւելանում է պատահածը սկզբունքով հաւատարապէս լուսանկարող և ծայնագրող ընդօրինակմանը, նաև սրանց ի մի հաւաքող ժամանակի և յիշատակութեան ի նկատի առնուելը։ Մի յիշողութիւն, որը թոյլ է տալի կրճատումն, ուղղումն, հաղարաւոր օտար կապակցութիւններ և սեփական զգացումների յաւելում. մի խօսքով անհատականացնող և այսպիսով արհեստական կերպով փոխուած մի յիշողութիւն։ Ուրիշ ի՞նչ է նշանակում իդէալականացնելը, բայց եթէ մի նիւթ յիշողութեան համածայն այնպէս մշակել, որ այդ մշակման մէջ անձնականը տեղ բռնի, ուր հնարաւոր է նոյն իսկ դիտաւորեալ կերպով, ընդամին իւր իսկ անձնաւորութեան ամբողջ հոգեկան դեղումները ընդարձակ հեղեղումներով ծաւալել։ Այսպիսով բարձր կուլտուրայում, շերտաւորուած անհատների մէջ անձնական ոճն է ծագում, այլև անձնական գեղարուեստական երկը, մինչդեռ ցածր կուլտուրայում, նման անհատների մէջ, իրար շատ նման շատ անձնաւորութիւնների միաժամանակ գործելուց ոչ անձնական, այլ ժամանակի ոճն է առաջ գալի, այլ և այս որոշ ժամանակի ոճի համածայն գեղարուեստական երկը։

Այսպիսով պատմական յիշատակարաններով բացատրում են հէնց սկզբում միմեանց մօտ գոյութիւն ունեցող բնական և իդէալական ձևերը. իբր բնական ձև երևում է առաւելապէս սերնդի ճիւղաղրութիւնը. իբր իդէալական՝ դիւցազներգութիւնը։ Այստեղից երևում է դարեր տևող պայքարի արմատը,

թէ պատմական երկը մի գեղարուեստական երկ է լինելու թէ ոչ։ Միշտ էլ նա կլինի մի գեղարուեստական երկ, քանի որ նոյնիսկ բնական ձևի յիշատակարանների մէջ, առնուազն բարձր կուլտուրայում, անձնական տարրի ազդեցութիւնը անխուսափելի է։ Անպայման նա կլինի մի գեղարուեստական երկ, երբ նիւթը ընդարձակ է և յիշողութեամբ իդէալականացրած նիւթի ընդգրկումը անխուսափելիօրէն օժանդակում է նրա մշակութեանը։ Եթէ ge leye ferenda ասելու լինինք, պէտք է խոստովանել, որ մեր ժամանակի իւրաքանչիւր պատմական երկ ոչ միայն անդիտակցօրէն, այլև բոլորովին դիտակցօրէն մի գեղարուեստական երկի ընոյթ է կրում։

Սակայն ճիւղագրութիւնն ու դիւցազներգութիւնը անհատական հոգեբանութեան յիշատակարանների միակ ձևերը չեն։ Նրանց հետ միասին կուլտուրայի ու հոգեկան ազատ ժամանակի զարգացման հետ առաջ են գալի նաև ուրիշները։ Երբ հնարաւոր է դառնում մարդկային գործողութիւնների առաջադիմութեանը հետևել ոչ միայն անդիր աւանդութիւններով, ինչպիսին են ճիւղագրութիւնը և դիւցազներգութիւնը, այլ աւելի խորը, օրինակ տառերով, վրձինով ու քարեգրչով, այն ժամանակ հիւղագրութիւնը տարեգրութիւնով և դիւցազներգութիւնը ժամանակագրութիւնով հնարաւոր է լինում եթէ ոչ փոխարինել, որովհետև հին ձևերը դեռ մնում են, գոնէ նրանց աւելի տեղ տալ։ Այս ձևերն էլ կարող են կրկին մեծանալ։ Իւրաքանչիւր մարդկային համայնքի պատմութեան մէջ գալիս է մի անվրէպ ժամանակ, երբ գիտակցութիւնը, շնորհիւր փորձառութեան, աշխատում է երևոյթների աշխարհը անկախ բաժանել և իշխել, երբ համեմատութիւնից ստացած վրճիռը տեղի է տալիս հետզհետէ ինդուկտիվ (ներածական) մեթոդին և հրաշքը՝ պատճառաբանութեան։ Այսպիսով հանդէս է գալի աշխարհի առաջին գիտական ըմբռնողութիւնը, որը միաժամանակ ընդգրկում է նաև պատմական աւանդութիւնները. այս պատահում է թէ բնական և թէ իդէալիստական ուղղութեամբ։

Հետևելով առաջին տեսակէտին, սկսում են աւանդութիւն-

ները նոր աղբիւրների համաձայն քննել, երբ գտնում են աղբիւրներ, ֆիլոլոգիական մաքուր ձևերով աշխարհ են բերում. ամբողջ աւանդութիւնը անխոնջ ու անվերջ ջանասիրութեամբ հետազօտւում է մինչև հաւաստիացման ասպիճանը։ Յետոյ սկսում են եղակի դէպքերով զբաղուել. այս դէպքում պատուի արժանին այն է համարւում, որ իւրաքանչիւր դէպք հնարաւոր եղածին չափ զտուած, միաժամանակ աւանդութեան կեղտից ու տղմից մաքրուած հանդէս բերուի։

Միւս կողմից կարիք է զգացւում այս ձևով բնական քննադատութեան միշտ աշխատող ջրաղացի տակից ելած մաքուր, եղակի աւանդութիւնների հատուածները իբրև նիւթ ծառայեցնել պատմական դրական շինութեան համար. շինութիւն, որ ունենալու է ճոխ բազմաթիւ սենեակներ ու շատ սարաւանդներ (Flüyel)։ Անշուշտ այստեղ դեր է խաղալու մի վերահսկող և ի մի ամփոփող յիշողութիւն, այլ և օգնելու են յոյզերն ու երևակայութիւնը, որոնք աջակցում են նրա գործողութեանը։ Այլապէս ի՞նչ ձևով հնարաւոր կլիներ այս ահագին նիւթին տիրապետելը։ Սակայն հէնց միայն յիշողութեան համաձայն ի մի ամփոփելը, միաժամանակ և նկարագրուած ձևով նիւթին տիրապետելը ըստ ինքեան անհնար է թւում։ Այժմ որոշ օժանդակ միջոցների կարիքն է զգացւում. ահագին դէպքերի մասերը ըստ յիշողութեան ի մի զուգորդելու համար միջոցներ, որոնց կարելի է բանականութիւնից ստանալ. հարկաւոր է դատողութիւնների որոշ ձևեր, որոնցով հնարաւոր լինի ամբողջ մասերի բաժանել և այդ ձևով տիրապետել եղածին։ Այդ դատողութիւնները բնականաբար նախ կապւում են եղակի անձնաւորութիւնների հետ, որոնք միշտ էլ միակ կամ առնուազն ըստ էութեան միակ հոգեկան շարժիչներն են երևում պատմութեան։ Նրանց գործերը, նրանց եղակի աշխատանքները, եղակի անձնաւորութիւնների ընդհանուր աշխատանքները, եթէ սրանց, իբրև մի ամբողջացած եղրակացութեան, օրինակ մի պաշտօնէութեան կամ մի տիրապետողի մասեր կարելի լինի ընդունել, այդ բոլորը այն դատողութիւններին են յարում, որոնցով ընդհանուր ընթացքը բացատրւում

է և այդպիսով ըմբռնելի է դառնում։ Այս արդէն պատճառաբանական պատմութիւնն է։

Սակայն պատճառաբանութեան մէջ գործադրուած divi de et impera-ն վերջ ի վերջոյ բաւարար չի երևում աւանդութիւնների նիւթի մեծութեան վերաբերմամբ, որովհետև նիւթը միշտ ընդարձակւում է։ Դէպքերի այն խմբերը, որ պատճառաբանական մեթոդը հեշտութեամբ ի մի համախմբելու հնարաւորութիւն է ներկայացնում, հերոսների կեանքի ամբողջութիւնը և մի պատերազմի ընթացքի դէպքերը կամ մի դիպլոմատիական գործը նիւթի մասերի բաժանելու դէպքում երևան են բերում հետզհետէ աւելի բարձր կուսակցութեան ուրուագիծը. այդ կապակցութիւնը ժամանակամիջոցների ընթացքում ժողովրդի մէջ եղած դէպքերը ի մի է համախմբում. այդպիսով, օրինակ, ստացւում են ուրուագծեր պապականութեան պատմութեան մէջ միշտ կրկնուող երևոյթների, կամ պրուսական միապետութեան զարգացման մէջ նման դէպքեր, տիպեր կամ հոգեկան կեանքի բոլորովին նման հիմնական գծերի ուրուագծեր, որոնք բողոքականութեան կոչումների առաքինութիւնների մէջ արտայայտւում են։ Այս. տեղ էլ պարզապէս պատճառաբանութիւնից շատ աւելի բարձրը դատողութիւն կազմելու ճանապարհն է հանդէս գալի. պատմական դէպքերը, երբ պատճառաբանեալ մի ամբողջութիւն են կազմում, իրենց ունեցած ընդհանուր նշանների շնորհիւ մի աւելի բարձր միութեան են վերածւում։ Երբ այս կատարւում է, սկսւում է պատմագրութեան մի եղանակ, որը վերջը հասցնում է այսպէս ասած պատմական իդէաների գիտութեան աստիճանին։ Այս անունը առաջ է եկել այն բանից, որ ամբողջի մէջ եղած պատմական ընդհանուր գծերը իդէա է անուանուել. այնպէս որ գործողութիւնից, պատճառաբանութիւնից յետոյ իդէան իբրև մտածողութեան համախմբում աւելի բարձր մի ձև է նկատուել։ Այս բանը, որքան մինչև այժմ հետազօտութիւնները մի որոշ ժամանակ որոշելու հնարաւորութիւն են ներկայացնում արևմտեան կուլտուրայում իւր մաքուր պատմագրական սկզբնաւորութեամբ հանդէս է գալի

առաջին անգամ 18-րդ դարու առաջին կիսի վերջին տասնեակներում գերմանական պատմագրութեան մէջ։

Ամբողջացման այս բարձր ձևերը սկզբից և եթ պատմական բնական թէ իդէալիստական ըմբռնողութեան կողմն էին հակուած։ Պարզ է, որ սրանք իբրև համեմատաբար աւելի վերացական ձևեր յիշողութեան հետ գործ ունէին և հէնց զուտ հոգեբանական հիմքերով նախ իդէալիստական պատմագրութեան հետ պէտք է մօտիկ առընչութիւն ունենային։ Սրան աւելանում է և այն, որ սրանք (իդէաները) դեռ պրիմիտիվ իդէաների դիտութեան մէջ ստացել էին աւելի բարձր, բայց դեռ անպատրաստ կերպարանք և ընդունակ էին երբեմն ուղղակի գերզգայական բնաւորութիւն ստանալու։ Իդէաները երևում են ոչ իբր մարդկային, որոնք ամենամեծ պատմական կապակցութիւնների ընդհանուր գծերի մեկուսացման ու վերացման շնորհիւ ստացած հասկացողութեան հիմք են ծառայում, այլ աւելի շուտ երևում են իբրև այս դէպքերի ետևում կառավարող, նրանց մէջ իշխող և որոշող ասուածային ոյժեր, որոնք իբրև բացարձակի, մարդկային ճակատագրի մէջ յայտնուելու ու գործելու ձևեր են երևում։ Պատմագրութեան մի ձև, որը 18-րդ դարու երկրորդ կիսում Գերմանիայում դանդաղօրէն զարգացաւ, որը յետոյ յատկապէս Շէլլինգի շնորհիւ գերմանական ռոմանտիզմի համար մեծագոյն իդէալիստական փիլիսոփայութիւնը դարձաւ, որի հիմնական աշխարհհայեցողութեանը Ռանկէն իւր կեանքի ընթացքում հպատակւում էր և վերջապէս նա իւր ընդարձակման ու զարգացման բոլոր սահմաններով ու կէտերով 19-րդ դարու համարեա ամբողջ բարձր պատմական զարգացման անհրաժեշտ մասը դարձաւ։

Այս միջոցում իդէաների վարդապետութեան իմացաբանական բնոյթը վաղուց յայտնի էր դարձել և անցեալ դարու 90-ական թուականներին սկսուած և մասամբ այժմ դեռ շարունակուող պատմական դիտութեան մեթոդի մեծ վերլուծութեան սկզբում նոյն բանը պարզապէս շեշտուել է։ Պէտք է ասել, որ այսօր ոչ ոք այլ ևս պատմական իդէաների գերզգայական բնաւորութեանը չի հաւատում, առնուազն ամբողջովին չի ընդու-

նում կամ դուցէ Ռանկէի մտքով չի ընդունում այն. որ ընդհակառակը նրանց մէջ բովանդակուող անհատական հոգեբանական դէպքերի շարքերը ի մի ամփոփելու գաղափարի ձևերը և այս վերջիններիս օգտակարութիւնը բոլորին արդէն ծանօթ է։

Մինչդեռ այսպիսով պատմութեան անհատական հոգեբանական դիտողութեան եղանակը հետզհետէ հասաւ իւր միջոցների այն կատարելութեանը, որը այսօր ունի, միւս կողմից նա վաղուց արդէն դադարեցրել էր նրանց սահմանաւորումն ու փոխարինումը սոցիալ-հոգեբանական դիտողութեան եղանակով, որքան խնդիրը պատմական հասկացողութեան սկզբունքներին էր վերաբերում։

Մոտամբ 17-րդ դարի, բայց առաւելապէս 18 և 19 դ դարի ընթացքում արևմտեան Եւրոպական կուլտուրայում բոլոր ժողովրդները ապրել էին ժամանակներ, երբ այդ կուլտուրային պատկանող անհատների մէջ խիստ հոգեբանական շերտաւորումներ էին տեղի ունեցել։ Այս ազգերի մէջ առաջ էր եկել մի ժամանակ և նրանցից էլ հաղորդուել էր, նոր ամերիկական աշխարհի կուլտուրային, որը իրաւունքով կարելի է անձնականութեան (subjektivismus) ժամանակ անուանել։ Ոչ թէ միտրինակութիւնը, այլ եղակիի անհատական զարգացման բաղմօրինակութիւնն է այսօր իդէալ համարուում։ Մեր ժամանակի ընդհանուր կուլտուրայի հիմքը անհատների ահագին աշխատանքի միութիւնն է, անհատներ, որոնք միմեանցից խիստ տարբերուում են։

Սա մի շատ ծանօթ դրութիւն է մեզ համար. վեցից եօթը սերունդների ջանասէր յառաջադիմութեան մի արդիւնք. աւելորդ է այս դրութիւնը աւելի պարզ նկարագրել։ Աւելի տեղին է այս փոփոխութիւնից հանել այն տրամաբանական ու պարզ եզրակացութիւնները, որոնք պատմութեան գիտութեան թէ ներկայ և թէ մօտիկ ապագայ ընթացքի համար կարևոր են։ Այստեղից երևում է, որ մի այդպիսի ժամանակի համար այն պատմական հասկացողութիւնն է յարմար, որը անհատական հոգեբանական դիտողութեան ձևի հետ ընդունում է նաև սոցիալ հոգեբանականը. այսինքն մարդկային համայնքների հոգե-

կան ընդհանուր արդիւնքների զարգացման դիտողութիւնը։ Այս վերջինի մասին ոչ թէ պէտք է պատահական կերպով խօսուի, այլ պէտք է միշտ և անհրաժեշտօրէն լուրաքանչիւր պատմական հետազօտութեան խնդիրների լուծման դէպքում ի նկատի առնուի, որ ուրեմն սոցիալ-հոգեբանական ոյժերն ուժեղ և ընդսմին զարգացման համար միակ որոշիչ ոյժերն են. այն ոյժերն են, որոնց ընթացքում անհատական հոգեբանական ոյժերի արդիւնքները ներփակուած են[1]։

Այժմեան անհրաժեշտ դիտողութեան եղանակի այս ընդհանուր ձևակերպումը ոչ միայն պատմագրութեան ճիւղում մասամբ պարզ դիտակցութեամբ իւր արդիւնքներն է տուել, այլ և նոյն իսկ բոլորովին նոր գիտութիւնների, օրինակ սոցիոլոգիայի առաջ գալուն նպաստել է. բոլորովին նոր մեթոդները, օրինակ նախապատմական պեղումների, առաջին անգամ դիտականօրէն արդիւնաւէտ է դարձրել։ Բայց անշուշտ սխալ կլինէր ընդունել, որ այս զարգացումը յանկարծակի է եղել և որ դեռ այսօր իսկ վերջացած կարող է համարուել։ Աւելի շուտ այդ փոփոխութիւնը երկար է տևել, առնուազն մէկ ու կէս դար, եթէ մենք ի նկատի ունենանք գերմանական հողի վրայ կատարուած դէպքերի ընթացքը։ Նախկին անհատական հոգեբանական հայեացքների դէմ մղած մշտական պայքարը եղել է հանդարտ, թէև միշտ էլ անյաղթելի է մնացել, չնայելով, որ նա սկսուող հայեացքի բնաւորութիւն ու մթութիւն ունէր, որովհետև իբրև ժամանակի ամենախոր հոգեկան փոփոխութիւնների, նոր հայեացքների արդիւնք էր հանդէս գալի, որպէս զի այժմ ընդարձակութիւն ու տրամաբանական ամրութիւն ու կապակցութիւն ձեռք բերի. այնպէս որ ամենաոխերիմ հակառակորդներն անգամ անկարող եղան կամ վիճաբանօրէն թուլացնելու այն և կամ նոյնիսկ մեկուսացնելու։

Քանի որ այստեղից սկսած յատկապէս տալու եմ գերմա-

---

[1]) Այս կէտի մասին հետևեալ դասախօսութիւններում աւելի մանրամասն կխօսուի։ Սկզբունքով ընդունում են և անհատական ուղղութեան պատմաբանները, բայց նրանք չեն աշխատում ուղղակի և միշտ այդ ուղղութեամբ։

նական զարգացման նկարագիրը, որովհետև այս ինձ ամենից լաւ յայտնի է, այլ և կարծում եմ ամփոփ սահմանում կարճ ժամանակուայ ընթացքում աւելի պարզ ու ուժեղ արուեստով նկարագիր տալ կարող եմ, ուստի առաջին տեղը պէտք է յիշեմ Հերդերի պատուոյ արժանի անունը, որի մահուան հարիւրամեակը մի փոքր առաջ գերմանացիք փառաւորապէս տօնեցին, այն գերմանացիք, որոնք մեր հողագնդի վրայ դեռ ապրում են։ Հերդերը նախ գերմանական կուլտուրայի շրջանում, ապա նաև նրանից դուրս «ժողովրդի հոգու» գաղափարի ստեղծողն է եղել։ Նա նախ մարդկային ամենամեծ համայնքների — ազգերի պատմական հասկացողութեան համար սոցիալ-հոգեբանական պահանջները գործադրեց և սրանցից էլ հանեց անհրաժեշտ հետևանքները։ Սակայն նա այս բանը արաւ, ինչպէս յատկապէս «իդէաներ մարդկութեան պատմութեան համար» աշխատութիւնը ցոյց է տալի, ոչ հանդարտ, հնար եղածին չափ սառնարիւն, իբր զուտ մտաւոր հետազօտութիւն, այլ աւելի շուտ ոգևորուած թռիչքներով լի դիտողութիւններով և դիւտ անողին յատուկ յափշտակութեամբ։ Սոցիալ-հոգեբանական յարաբերութիւններին վերաբերող նոր գտնուած անվերջ նիւթի նկատմամբ սա հոգեբանական մի այնպիսի դրութիւն էր, որի համար Հերդերին ուրիշ ոչ մի բանում մեղադրել չէր նշանակի, բայց եթէ խիստ քիչ սոցիալ-հոգեբանական հասկացողութեան պակասութեան մէջ։ Այն ժամանակներում, երբ մարդկային համայնքները դէպի մի փոխուած աւելի բարձր հոգեկան գոյութեան են ձգտում, այս բանը բանականութեան համաձայն չի լինում և ոչ էլ մտածողութեան զուտ բանական փորձուած ճանապարհով։ Աւելի շուտ նոր գալիքի երիտասարդական զգացումներով, լուսաւորուող նոր կապակցութիւնների նախազգացումով ոգևորուած մի նոր ժամանակի մուտքի դռներից են անցնում և գիտութիւնը դառնում է մարդասէրութիւն, փիլիսոփայութիւնը բանաստեղծող բնազանցութիւն։ Այս էր գերմանական նշանաւոր ժամանակի անձնականութեան բնաւորութիւնը, որը սկսեց կլոպշտոկով և որի զարգացման վերջին ճիւղն էր նոյնութեան փիլիսոփայութիւնը։ Այս ժամանակի առաջնակարգ, մեծ ներկայացուցիչներից է և

հերդերը։ Ուսոի հերդերի յափշտակուած ըմբռնումը պատմութեան սոցիալ-հոգեբանական տարրերի՝ եղակի չէ. նա մի ամբողջ շրջանի սեփականութիւնն է և ընդգրկում է այդ շրջանի ոչքի ընկնող երևոյթը, ռոմանտիզմն ևս։ Այս նորը մի պարզ արտայայտութեամբ ասելու համար ասենք, որ այսպիսով ծեռք էր բերած սոցիալական հոդու բաղմաթիւ բարդ երևոյթների վերաբերմամբ առաջին անգամ մի տեսութիւն։ Արդէն յառաջադիմել էին այս տեսութեան էական կէտերը շատ անգամ մասամբ, երբեմն ամբողջապէս բանաստեղծօրէն նկարագրելու, բայց սոցիալ-հոգեբանութեան բաղադրիչ տարրերի ըմբռնման, ամբողջացած երևոյթների հասարակ տարրալուծման դեռ չէին հասել։

Կուլտուրայի պատմագրութեան եղանակն է, որը յատկապէս զբաղւում է սոցիալ հոդեբանութեան նկարագրով, որը ծնաց մինչև Ֆրայտագ և Ռիլ, նոյնիսկ մինչև Բուրկհարդը և միայն վերջին դարու վերջին տասնեակներից սկսած այս ըմբռնումը հնանում է։

Եթէ այս երկար խաղաղ ժամանակի ընթացքում մեթոդի տեսակէտից յառաջադիմութիւն չեղաւ, անշուշտ այն պատճառով, որ հէնց պարզ կուլտուրական պատմական նկարագիրը նախ նիւթի անհաւատալի մեծ քանակի պիտի յաղթահարէր։ Սրան աւելացաւ նաև մի այլ բան։ Առաջին անծնականութեան շրջանի սկսուող ժամանակը, որը շուրջ 1750 ին սկսուած, վերջանում է մօտ 1820-ին, ամենաուշը 1830-ին, որպէս զի միայն 1870-ին և 1880-ին մի նոր թռիչքի, մի երկրորդ անծնականութեան կեանքի շրջանի սկսուելուն տեղ տար։ Այդ միջանկեալ ժամանակում, ամենաուշը 1020-ից սկսում են առաջին շրջանի ծեռք բերածները ոչ թէ աւելի կազմակերպել, այլ աւելի շուտ մինչև այդ հասած դրութիւնը աւելի իմացական դարձնել. յափշտակութիւնը մտածողութեան, ենթադրական ըմբռնումը իմացականօրէն տիրապետութեան տեղի են տալի։ Այս մի յետաշրջում է, երբ բնական դիտութիւնների շրջանում բնափիլիսոփայութիւնը տեղի է տալի մեքենագիտութեան նոր զարգացմանը. մի փոփոխութիւն, երբ հոգեկան

գիտութիւնների շրջանում լուսաւորութեան ժամանակի հին բանական փիլիսոփայութիւնը, որը 1680-ից սկսած յաջորդ սերունդների ժամանակ զարգացել էր, նորից ուժեղ կերպով, թէև մի որոշ փոփոխութեամբ նա հանդէս է գալիս։ Պատմագրութեան մէջ այս շարժման, որը վերջապէս 50—70 թուականների հոգեկան գիտութիւնների, գեղարուեստի ու բանաստեղծութեան անկման շրջանին ու անպտուղ պատմագրութեան հասաւ, հետևանքն եղաւ անհատական-հոգեբանական նոր ըմբռնողութեան հանդէս գալը. առաջ եկաւ այն, որ դրա հակառակ սոցիալ-հոգեբանական գիտողութեան եղանակը, որը ներքուստ դեռ այնքան չէր ամրապնդուել, չկարողացաւ դերիշխող լինել։ Այս երկու հայեցողութիւնների վիճաբանութիւնների մէջ Ռանկէն վարպետ դարձաւ. այս զուգորդութիւնը, որոշ տեսակէտով յաջող և յամենայն դէպս իւրատեսակի, տալիս է նրան և նրա երկերին միշտ մի առանձին տեղ։ Վերջապէս ոչ այնքան Ռանկէի, որքան նրա աշակերտների, յատկապէս Զայբելի գրուածքներում անհատական հոգեբանական ելակէտը յաղթանակ է տանում. միայն թէ այս անկասկածելի տիրապետողի գրութեան ժամանակ կուլտուրական պատմագրութեան ստորադաս գործունէութիւնը ուղղակի չի ժխտւում, այլ իբր անվնաս ու անարժէք թոյլատրւում է։ Սակայն Գերմանիայի պատմական զարգացումը 1815-ից—1870-ը մի առանձին թռիչք է կատարում։ Այս միջոցը զուտ քաղաքական գործունէութեան ժամանակ էր. ազգը իւր հոգու բոլոր ոյժով ձգտում էր խիստ ցանկալի քաղաքական միութեանը։ Այնպիսի գրուածքներ, որպիսի են Գիզեբրիխտի գերմանական կայսրների ժամանակի քաղաքական պատմութիւնը կամ Դրոյզէնի՝ Պրուսական քաղաքագիտութեան պատմութիւնը այս կապակցութեամբ պէտք է իբր անհրաժեշտ երևոյթներ յիշուեն։ Ի՞նչպէս կարելի է այն ժամանակ քաղաքական, իսկ այս նշանակում էր որոշ չափով պատմութեան անհատական հոգեբանութեան ուսումնասիրութեան եղանակը մնացածներից չդերադասել։ Այստեղից էլ հասկանալի է դառնում մեծ մասամբ այն փաստը, որ սոցիալ-հոգեբանութեան

յառաջադիմութիւնը, որը ուրիշ ազգերի մէջ, ինչպէս Ֆրանսացիների մէջ յանձին Կոնտի փիլիսոփայութեան ունեցել էր, Գերմանիայում քիչ ուշադրութեան արժանի եղաւ։

19-րդ դարու վերջին տասնեակները մի յեռաշրջում առաջ բերին. 1870 և 1871 թուականները ազատեցին ազգային գոյութեան ու միութեան կոպիտ հոգսերից. ներքին կուլտուրական տարրերի ծաղկումը առաջին տեղը բռնեց։ Այս տեղի ունեցաւ ժամանակի հոգեկան կեանքի մի նոր շրջանի սկզբի հովերի ազդեցութեան տակ. ժողովրդատնտեսութեան ու տեխնիկայի զարգացումը, երկրի վրայ հաղորդակցութեան արագ զարգացումը, բնութեան մէջ և մինչև իսկ ներքին կեանքի սահմաններում կատարած գիտական տիրապետութիւնները, այս բոլորը և այլ իւմբ հազարաւոր ուրիշ, աւելի քիչ արժէքաւոր երևոյթներ առաջ բերին նոր տպաւորութիւնների և տրամաբանական կապակցութիւնների հնարաւորութեան մի անվերջ քանակութիւն. սրա հետ միասին մինչև այժմ եղած կենդանի հոգեկան գործունէութեան մի չլսուած ընդլայնումն։ Հետևանքն եղաւ հոգեկան գործունէութեան խիստ շերտաւորումն և սրա հետ միասին սոցիալ-հոգեբանական տարրի նորացած ու վճռական առաջ գալը։ Գիտութիւնների ամբողջ շարքում այս բանը կարելի է նկատել. առանձնապէս գերմանական սոցիոլոգիայի և մարդաբանութեան վերջին տասնամեակներում ունեցած խորը հետևանքներով լի երևոյթների հիմքը դարձաւ։ Պատմութեան շրջանում այս նշանակում էր կուլտուրայի պատմագրութեան արթնացումը այն աստիճան, որ աստիճան սկսեցին մեթոդի զարգացման համար եռանդով աշխատել։ Այժմ նկարագրութիւնը չէր միայն դեռ ևս նշանաբանը, ոչ, այլ նաև իմանալը։

Ի հարկէ այժմ պէտք էր սոցիալ-հոգեկան կեանքի բարդ երևոյթները, այսպէս ասած ժողովրդի հոգու ազդեցութիւնները հետազօտել իրենց բաղադրիչ մասերով։ Այս ուղու վրայ առաջին քայլը երևոյթների ժամանակագրական բաժանման պէտք է տանէր, երևոյթներ, որոնք մեծ մարդկային համայնքների, որ նշանակում է յատկապէս ազգերի կեանքի ընթացքում, տե-

ղի են ունեցել։ Ուրեմն պէտք էր ապացուցանել ու մանրամասն բնութագրել սոցիալ-հոգեկան շրջանները, այս սահմանների մէջ եղած կուլտուրական ժամանակաշրջանները։ այս էր ամենառաջին խնդիրը։ Ցայտնի է, որ նախ Բուրկհարդտը սկսեց այս բանը. նա իւր «վերածնութեան կուլտուրայի պատմութեան» մէջ առաջինը մի օրինակով մանրամասն լուսաբանեց այսպէս ասած միջին դարի ու բարձր կուլտուրայի ժամանակի մէջ եղած մեծ հոգեկան տարբերութիւնը։ Այսպիսով մի աղգի կուլտուրական ժամանակի չափական ընթացքում գլխաւոր հատուածներից մէկը ամբացրուած ու նկարագրուած է մի վարպետ ձեռքով։ Այստեղից սկսած պէտք է ուղին առաջ տարուէր ընդհանրապէս կուլտուրական ժամանակների ընթացքի մի ամբողջ շարք վերականգնելու համար։ Այդ էլ եղել է իմ «Գերմանիայի պատմութեան» մէջ։

Բայց այս ոչ այլ ինչ է, բայց եթէ սոցիալ-հոգեբանական մեթոդի խտանալու սկիզբը։ Կուլտուրայի ժամանակները տալ դեռ չի նշանակում սոցիալ-հոգեկան շարժման տարրերն իբր արդիւնքներ տալ, որոնք միայն ժամանակի միջոցներ են, որոնց մէջ այս շարժումը իւր ուժգնութեան ու քանակի տեսակէտից եղած փոփոխութիւններով ընթանում է։ Երբ սրանք արդէն գտնուած են, իսկոյն հարց է բարձրանում, թէ արդեօք կուլտուրայի ժամանակների ընթացքի համար հիմնապէս ընդհանուր հոգեկան մեխանիկա կայ և եթէ այն ինչպիսի է և որն է նրա մէջ երևացող, նրա հիմք կազմող հոգեկան տարրերի գումարը։ Եթէ այս պրոբլէմները ևս վճռուեցին, այն ժամանակ առաջ է գալու վերջին, մի ժամանակաւոր վերջնական հարց, թէ արդեօք այժմ հանդէս եկած հոգեկան տարրերը այն մտքով յիրաւի տարրական են, որ նրանք մինչև այժմ զարգացած ժամանակի անհատական հոգեբանութեան արտայայտութիւններում կրկին երևում են թէ ոչ։

Այս հարցերը, որոնք այժմ շօշափուեցին այստեղ, ոչ կարելի է լուսաբանել և ոչ էլ նոյնիսկ վճռել. բայց յետագայ դասախօսութիւններում պէտք է որոնեն այն ճանապարհները, որոնցով դրանց կարելի է պատասխանել մինչև գտնուի այն

ապացոյցը, որ պատմութեան մեծ սոցիալ-հոգեկան շարժումների մեխանիկայի համար նոյն տարրերն ու օրէնքներն են իշխում, որոնց գտել է անհատը ուսումնասիրող ժամանակակից գիտական հոգեբանութիւնը. այսպիսով կբացուի իսկապէս պատմական շարժման տարրական հոգեկան եռանդը։

Այստեղ մինչև այժմ ասածներից առաջ է դալի մի այլ պարտականութիւն։ Եթէ նորագոյն պատմագրութիւնը ընդհանուր պատմական եղելութեան տարրերն է որոնում և նրանց գտնում ու ենթադրում է որոշ հոգեկան անցքերի մէջ, հարց է ծագում, թէ արդեօք նա ընդհանուր ժամանակի հոսանքների նմա՞ն է շարժւում և դրա համապատասխան էլ առողջ կերպով շարունակուելու ու զարգանալու հնարաւորութիւն ունի՞։ Մի հարց, որին նախ պէտք է պատասխանել։ Մի երկրորդն էլ ասում է, եթէ նորագոյն պատմագրութիւնը նկարագրուած ուղղութեանը համապատասխան է, ո՞րն է նրա տեղը ու ազդեցութիւնը միւս գիտութիւնների վերաբերմամբ։

Գերմ. թարգմ. Pessimist

(Կը շարունակուի)

ՍԱԴԻԻ ԳԻԼԻՍՏԱՆԻՑ

Հիւրմիւզ թագաւորի մասին պատմում են, թէ երբ հարցրին—Հայրիդ վէզիրներից ի՞նչ տեսար, որ բոլորին էլ շղթայի զարնել տուիր,—պատասխանեց։ պատժի արժանի ոչինչ չտեսաւ,բայց նկատում էի, որ իմ ահն անչափ է իրանց սրտում և բնաւ վստահութիւն չունին իմ վրայ. վախեցայ թէ մի դուցէ այդ ահից մտածեն մի օր սպանել ինձ. բացի դրանից քիչ էլ անսացի իմաստունների խօսքին, թէ

Ով քեզանից վախենում է, վախիր նրանից դու, խելօք,
Թէկուզ նրա պէս հարիւրի հետ կռիւ մղես ու յաղթես.
Զէ՞ս իմանում, որ երբ կատուն ճնում է խեղճ ու անոք,
Ճիրանովը վագրի աչքն էլ կը հանէ անմիջապէս։
Ինչի՞ց է, որ փաթաթւում է օձը հովւի ոտներին,—
Նրանից որ միշտ վախում է թէ հովիւը տայ իր գլխին։

Մի տարի Դամասկոսի մզկիթում աղօթքի էի նուիրուած Եահեայի—ողջո՞յն նմա—շիրմի բարձի վրայ։ Մի օր դիպուածով ուխտի եկաւ ու իր կարիքների համար սկսաւ աղօթել մի արաբ թագաւոր, որ անուանի էր իր անարդարութեամբ։

Դէրվիշ թէ հարուստ էն հողի ծառան,
Հարստի պէտքերն են, որ չունին սահման։

Դարձաւ դէպի ինձ ու ասաց. դուք դէրվիշներդ, որ հոգւով վեհ էք և գործով արդար, յիշեցէք ինձ ձեր աղօթքների մէջ, որ անփորձ մնամ թշնամիներից։ Ասացի. խեղճ ժողովրդիդ գործիր դու բարիք, որ խիստ թշնամուց չտեսնես չարիք։

Ո՞վ բազկով հուժկու, բռունցքով ահեղ,

Մի կոտրիր թոյլի թևերը անմեղ,
Վա՜յ ով չի խղճում ընկած թշուառին,
Ինքն էլ որ ընկնի, կը խփեն ժայռին.
Ով վատը ցանած՝ լաւն հնձել կամի,
Չե՞ս ասիլ հապա—երաղդ բարի.
Բամբակն ականջիցդ հանիր ու դատ տես,
Թէ չէ կը դատէ ժամանակը քեզ։

Մարդս որդիներն անդամ են իրար,
Շինուած միևնոյն տարրից հաւասար.
Մի անդամն երբ որ կրում է մի ցաւ,
Միւս անդամները չեն հնալ անցաւ.
Իսկ դու, անտարբեր ուրիշի ցաւին,
Արժան չես էլ մարդ կոչուելու պատուին։

Մի դէրվիշ—ընդունելի լիցին խնդրուածք իւր—յայտնուեցաւ Բաղդադում. լուր տուին Իւսուֆ-Բինի-Հուջջաջ թագաւորին, որ կանչել տուաւ նրան իր մօտ և ասաց. մի լաւ աղօթք արա ինձ համար։ Դէրվիշը գլուխը վեր բարձրացրեց ու ասաց. «Տէր Աստուած, սրա հոգին տա»։ Հուջջաջը հարցրեց—այդ ի՞նչ տեսակ աղօթք է։ Պատասխանեց. «Քեզ համար էլ լաւ աղօթք է, բոլոր մուսուլմանների համար էլ»։

Վեր կալ ծեռդդ ծեռիդ տակը հեծողներից դու, անդութ.
Հերիք ինչքան մահ սփռեցիր լաց ու կոծի դու անփոյթ.
Քո ի՞նչ բանն է դահ բարձրանալ, տիրել մի ողջ աշխարհի.—
Լաւ է մեռնիս քան մեռցնես,—աշխարհ քեզնից ազատուի։

Մի անխիղճ թագաւոր հարցրեց մի կրօնաւորի, թէ ո՞րն է ամենից լաւ պաշտամունքը։ Կրօնաւորը պատասխանեց. Քեզ համար կէս օրուայ քունը, որպէսզի դէթ մի րոպէ մարդկանց չնեղես։

Քնել էր բռնաւորն օր հասարակին,
Ասացի—երնեկ չզարթնես կրկին.
Մարդ կայ, որ քունն է արթնութիւնից լաւ,
Ախտ կայ, որ ունի մահից էլ վատ ցաւ։

Մի թագաւորի համար լսել եմ, որ մի գիշեր կերուխումի մէջ լուսացրել և արբեցութեան վերջում ասում էր.

Սրանից էլ լաւ էլ ինչ բոպէ մեզ համար.
Ոչ վիշտ ունենք ոչ մտածմունք լաւ կամ չար։
Մի դերվիշ դուրսը ցրտին պառկել էր մերկ. լսեց ու ասաց.
Ինչքան էլ կարծես՝ անհոգը դու ես,
Քեզնից լաւն ես եմ, մէկ նայիր ու տես։

Այս խօսքը թագաւորին դուր եկաւ. հազար դահեկանի մի քսակ լուսամուտից դուրս բռնեց ու ասաց. Մէյ դերվիշ, քղանցքդ բաց։—Դերվիշն ասաց. որ զուրկ եմ շորից, քղանցք որտեղից։ Թագաւորն աւելի ևս խղճաց նրա թշուառ վիճակի վրայ ու մի պատմուճան էլ դնելով փողի հետ՝ ուղարկեց նրան։ Դերվիշն այդ փողը կարճ միջոցում սպառեց ու վերադարձաւ թագաւորի մօտ։

Շռայլ ափում գանձ հաստատուն,
Եւ մաղումը ջուր,
Սիրող սրտում համբերութիւն.—
Ո՞վ տեսաւ և ո՞ւր։

Թագաւորն իսկի նրա մասին չէր էլ մտածում. հէնց որ եկան ասացին, վեր կացաւ ու դէմքը խոժոռեց։ Այստեղից է, որ ասել են թէ խելացի, բանիմաց մարդը թագաւորի ցաստումից ու զօրութիւնից պէտք է վախենայ. որովհետև նրանց հոգսերի առարկան տէրութեան մեծ մեծ գործերն են և հասարակ մարդկանցով միշտ չեն զբաղուել։

Արքայի շնորհն ի զուր է նրան,
Ով պատեհ ժամում չի դիմում նրան.
Մինչև որ խօսքի տեղը չգտնես,
Մի ասիլ, փա՛յ թէ ամօթանք կրես։

Եւ հրամայեց, որ աչքից հեռացնեն այդ շռայլ, աներես անպիտանին, որ այդքան կարճ միջոցում այնքան շնորհները կերաւ, ոչնչացրեց. դեռ չի իմանում, ասաց, որ պետութեան գանձարանը խեղճերի սպասաւ է, ոչ թէ այդպէս սատանի որդկերանց։

Գիժն երբ իր մոմը վառէ կէս օրին,
Ճարպ էլ չի գտնիլ մութ երեկոյին։

Բարեխրատ նախարարներից մին ասաց. Տէր արքայ, իմ կարծիքով՝ այսպիսի մարդկանց պարգևներ շնորհելիս պէտք է քիչ-քիչ տալ, որպէսզի միանգամից չվատնեն, իսկ հրամայել որ բոլորովին արգիլեն, շնորհաբաշխ անձանց վայել չէ. մէկին նախ շնորհներով թողնել յուսալից, ապա շնորհազուրկ անել, յուսահատեցնել՝ լաւ չէ։

Ագահութեան դուռն երեսիդ, այ մարդ,
Բանալ չտայիր.
Որ բանալ տուիր, էլ տմարդ տմարդ
Փակել չտայիր։
Ո՞վ է տեսել, որ հիշազում ովքեր
Ծարաւին ջրի,
Անոյշը թողած՝ որոնեն հորեր
Աղային ջրի։
Մարդ, օձ թէ թռչուն որտեղ քաղցրահամ
Գտնեն աղբերակ,
Այնտեղ կը վազեն երամ առ երամ՝
Հանդցնել պապակ։
Եւ ճնճղուկներն էլ արտը կը դիմեն,
Որ ժողուեն հատիկ,
Ոչ թէ կը դիմեն այնտեղ, ուր, գիտեն,
Երդ է աղքատիկ։

Պարսկ. թարգմ. Մ. Վ. ՄԱՔՍՈՒՏԵԱՆ

Մի՛ ՎՀԱՏԻՐ

Մի՛ վհատիր, որ քեզ այդպէս
Բախտը հեգնեց անիրաւ.
Որ նոր ելած դու ասպարէզ՝
Ճաշակեցիր վիշտ ու ցաւ։

Նայիր երկինք, այնտեղ բարդ բարդ
Կուտուած ամպեր, շանթ, կայծակ...
Բայց սարը, տե՛ս, կանգնած հպարտ,
Գլուխը վեր, համարձակ։

Դու էլ, ընկեր, սարի նման
Կանգնիր անվախ, անյողդողդ.
Անթիւ ցաւեր թող գան, գնան,
Կռուիր միշտ քաջ, միշտ խրոխտ...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(Մահուան 17 ամեակի առիթով)

Դառնագոյն է վիճակ զգայուն մարդոյ՝ տեսնել ամէն յափոյ բաժանումն իւր սիրելեաց և մտերմաց՝ անողոքելի հարուածով մանգաղին, որ անդադար կը հնձէ տարաժամ զայնպիսի. իսկ, որք հանգիստացած են մխիթարիչ լինել իւրեանց շուրջը գրտնուած մարդոց վշտաց, իւրեանց շնչով, գրչով և զգալի օրինակաւ։

Այդ դառն պարագայի մէջ կը գտնուէր Հայ ժողովուրդը մի ամիսէ ի վեր, երբ իմացած էր թէ՝ Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանցի զայրագին հիւանդութիւնն մահաբեր պիտի լինի, անընդունակ լինելով բժշկական ամենայն ճարտար դարմանաց։

Ձ՛ուշացաւ այդ տխուր օրն և տեսա նոյեմբեր 17 (1892) երեքշաբթի առաւօտ մայրաքաղաքիս ամեն ազգային շրջանակների մէջ տրտմութեամբ կը հնչէր շշնչիւն մը՝ թէ այլ ոչ ևս է ի կեանս Գարեգին սրբազան, սիրաբան գրիչն Հնոց եւ Նորոց, Գրոց եւ ըրոց, և ներկայացուցիչն գեղեցկուհու Թորոս Աղբարի, որք միահաղոյն Համով Հոտով կը յաղեցուցանէին զսովեալ ախորժակս բանասիրաց և գրասիրաց։

Տխուր էին և սգամած ամէն դէմք այդ օր, քանզի աւաղ, Հօտն իւր հովիւն ու այցելուն, Բեմն իւր քարոզն ու վարդապետն, Սեղանն իւր տաճարապետն, Ուսումնարանն իւր կրօնուսոյցն, Դպրութիւնն իւր ընթերցողն ու հետազօտիչն, Աւետարանն իւր բացատրողն ու մեկնաբանն, Եկեղեցին իւր առաքինի տեսուչն—օրինակելի եպիսկոպոսն միանգամայն կորուսին։

Գարեգին Բ. Սարգսեան

Այլ սակայն, ըստ որում այս էին կամք Արարչին, բովանդակ ուխտ եկեղեցւոյ Հայոց, հետևեալ օրը համակերպութեամբ և հպատակութեամբ օրհնեցին որպէս զանքննելի կամս Բարձրելոյն, նոյնպէս և զյիշատակ ի Տէր հանգուցելոյն. ծայնակցելով հանդիսական օրհնաբանութեանց և մաղթանաց՝ յեկեղեցւոյ մինչև ցգերեզման Թաղին Բերայի, ուր ամփոփեցաւ մարմինն յուսով յարութեան Յիսուսի Փրկչին։

Իբրև երեսնամեայ ծանօթ և բարեկամ նուիրելով այս սիրապրոշմ տողեր հանգուցեալ սրբազանի յիշատակին, կը յաւելում աստանօր նորա համառօտ և ստոյգ կենսագրութիւնն, քաղելով յիւր գրուածոց մեծամասնութեամբ։ Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանց ծնեալ է ի Վան քաղաքի Այգեստանը յամին 1840. դեկտեմբեր ամսոյ մէջ, և մկրտուած Յանկուսների եկեղեցում, Յովհաննէս անուամբ։

Իւր հայրը կը կոչուէր Աւետիս Սանտենց, որ ապա ինքն փոխած է Սրուանձտեանց՝ երբ Գագեգին անունն ստացաւ ի դպրութեան և ի վարդապետութեան։

Նախնական ուսումն ստացած է Յանկուսների եկեղեցւոյ վարժարանը և ապա Վարագայ վանքը՝ լինելով ի կարգս առաջին աշակերտաց Խրիմեան ս. Հայրիկին, որոյ հետ 1861 թուին գնաց ի Թիֆլիս, և շրջեցաւ մի քանի քաղաքներ, և գրեց իւր ճանապարհորդութեան տպաւորութիւններն, դէպքերն և նկարագիրներն, որք յայնժամ հրատարակեցան Կ. Պոլսոյ «Մեղու» օրագրի մէջ, գնահատուելով բոլոր ընթերցողներէն։

Յաջորդ տարին իւր աշակերտակիցներէ միոյն հետ վերստին շրջեցաւ նոյն տեղը, և ամիսներով մնաց Շուշի քաղաքի մէջ, հիւրասիրուելով բարեյիշատակ Հախումեանց Համբարձում Աղայէ, և գտնուեցաւ այն շարժումների մէջ, երբ Ղարաբաղի ազգայինք մեծ ուժով վէճեր ունէին իրենց վիճակաւորի և ուսումնարանի մասին։

Երբ «Արծիւ Վասպուրական» հանդէս կը հրատարակուէր Վարագայ վանքի մէջ, Սրուանձտեանցի գրուածներով կը զարդարուէր թէ՝ յայտնի ստորագրութեամբ և թէ՝ անստորագիր, ոչք անուշ հոտ ու համ ունէին, ինչպէս են «Շինական կեանք»

և «Ս. Սահակ Պարթև» յօդուածներն։ Նախ աշխատակից և ապա տնօրէն եղաւ «Վասպուրական Արծուոյն» և միևնոյն ժամանակ Վարագայ վարժարանին ուսուցիչ։ Իսկ 1862 թուի վերջերն իւր Վարդապետն տարաւ զինքն Մշոյ Ս. Կարապետի Վանքը, ուր տնօրէն և ուսուցիչ եղաւ վարժարանին, և յաջորդ տարին իւր խմբագրութեամբ սկսաւ հրատարակել «Արծուիկ Տարօնոյ» կիսամսեայ թերթն, կատարելով միանգամայն և սրբազան Խրիմեան Հայրիկի գրագրութիւնը և թղթակցելով «Մանզումէի էֆքեար» և «Մասիս» լրագիրներուն։

Այն տարիները տհաճին խնդիրներ կային Մշոյ աշխարհին և վանքին մէջ՝ որք կզբաղեցուցնէին լրագրութիւնը, պատրիարքարանը և կառավարութիւնը, որոց վերայ եղած ամբողջ գրութիւններն Սրուանձտեանց կը խմբագրէր. և ի ներկայութեան և ի բացակայութեան Վանահօր ամեն կնճռոտ ծառայութիւնք իւրեան բաժին ինկած էին։

1867-ին Կարնոյ Ազգային վարժարանին տնօրէն կոչուեցաւ, ուր շարունակեց երեք տարի. և նոյն տարուայ (1867) դեկտեմբերին երբ Խրիմեան ս. Հայրիկ տակաւին եպիսկոպոս չէր եղած և կը գտնուէր ի Կ. Պոլիս Պոդոս, ս. պատրիարքէն գրկել տուաւ առ Կարնոյ առաջնորդ Վեհապետեան Յարութիւն ս. արքեպիսկոպոսն, ձեռնադրել զՍրուանձտեանցն վարդապետ ի վերայ վանուց Վարագայ, որ և կատարուեցաւ։

1868-ին Խրիմեան ս. Հայրիկ դառնալով ի Պոլսոյ կ'երթայ ի Մուշ, և անտի ի Վարագ, և անտի ի ս. Էջմիածին և կ'օծուի եպիսկոպոս Տարօնոյ, և դառնալով ի Մուշ ս. Կարապետի վանքը, երբ 1869-ին Կ. Պոլսոյ պատրիարք կ'ընտրուի, կը կարգէ զՍրուանձտեանց փոխանորդ նոյն վանաց, և ինքն կուղևորի ի Կ. Պոլիս։

Երեքուկէս տարի կը տևէ Սրուանձտեանցի սոյն փոխանորդութեան պաշտօնն, զոր վարեց ամենայն կանոնաւորութեամբ, և յորմէ յոյժ գոհ մնացած էին թէ ուխտաւորք և թէ թեմականք. վանքի պարտքը զրեթէ ջնջուած էր, վանական և միաբանից պիտոյք առատացած, վարժարանն բարեկարգ և եկեղեցին վայելչազարդ եղած էին, և գիւղերու մէջ վարժարան-

ներ կառուցանելու նպաստած և անձամբ աշխատած էր ա-
բիաչանն Սրուանձտեանց։

Խրիմեան ս. Հայրիկ պատրիարքութենէ հրաժարած էր,
երբ Գարեգին վարդապետ Սրուանձտեանց Պոլիս հասաւ, և
մէկ տարի Գուզկունճուկի և չորս տարի Գատը գիւղի եկեղե-
ցեաց քարոզիչ եղաւ, վերջնոյս վարժարանին մէջ կրօնի ուսուց-
չութեան պաշտօն ևս ունենալով, ինչպէս նաև Մէղպուրեան
վարժարանի մէջ։

1876-ին Խրիմեան ս. Հայրիկի հետ Զմիւռնիա գնաց
Սրուանձտեանց վարդապետ, քանզի անդ մեծ վրդովումն և
խռովութիւն թողած ու մեկնած էր Եղեսեան Յովհաննէս ե-
պիսկոպոս և Ներսէս ս. Պատրիարք պաշտօն տուաւ
Սրուանձտեանցին՝ աջակից լինել ս. Հայրիկին, և խաղաղու-
թիւնն հաստատելով Սահմանադրութիւնը գործադրել, որ և
յաջողեցաւ նարտարամտութեամբ և խոհեմութեամբ կարգա-
դրել, յորմէ զոհ մնացին թէ պատրիարքարանն և թէ Զմիւռ-
նացիք։ Այնուհետև էր որ խաղաղութեամբ՝ տեղւոյն առաջ-
նորդական ընտրութիւնն կատարեցաւ օրինաւորապէս, և գեր.
Մելքիսեդեկ վարդապետ Մուրատեանց առաջնորդ ընտրեցաւ։

1878 և 1879-ին Սրուանձտեանց կոնդակաւ Ներսէս
պատրիարքի և հաճութեամբ և պաշտօնագրովք Բ. Դրան յու-
զարկուեցաւ Հայաբնակ երեք մեծ վիլայէթներ, Սեբաստիա,
Բարբերդ և Տիգրանակերտ, սկսեալ Սամսոնէն. յորս իւր պաշ-
տօնն բարեոքապէս կատարելով հաւաքեց և խմբագրեց այն
Թանկագին տեղագրութիւններն՝ որք հրատարակուած են «Թո-
րոս Աղբարի» երկու հատորների մէջ, երբ վերադարձաւ ի Պոլիս։

1879-ին Ակնայ առաջնորդ ընտրուած էր, յորժամ պաշ-
տօնապէս հրաւիրուեցաւ երթալ իւր այս նոր վիճակ, չվարա-
նեցաւ երբէք թողուլ զմայրաքաղաքն կամ հրաժեշտ տալ իւր
պաշտօնէն, այլ սիրով գնաց և անդ ևս բոլոր ժողովրդեան սէրն
առ ինքն գրաւեց։

Բայց իւր գործունէութիւնն անդ ևս հանդիստ չթողին
զինքն. Վանայ վիճակի սովն սաստկացած էր. և Խրիմեան ս.
Հայրիկ որ Վանայ առաջնորդ կարգուած էր և առաքելական

ջանիւք անխտիր կը մատակարարէր սովատանջ ժողովրդոց ուտեստ ու հագուստ, իւրեան օգնական խնդրեց զԳարեգին վարդապետ և Ներսէս պատրիարք հրամայեց երթալ։

Սրուանձտեանց արիաբար վաստակեցաւ իւր ծննդավայրին օգտակար հանդիսանալ, աջակից լինելով ս. Հայրիկին, ուր և բաւական ժամանակ մնաց, մինչև որ պարտաւորեցաւ երթալ ի Բաղէշ, և դառնալ ի Պոլիս։

1885-ին Առաջնորդ ընտրուեցաւ Տրապիզոնի վիճակին և 1886 Յունիս 8-ին նոյն վիճակին վրայ եպիսկոպոս օծուեցաւ Տ. Մակար կաթողիկոսէն[1]։

1888 թուին Կ. Պոլիս եկաւ (պատրիարքարանի տնօրինութեամբ ըստ բարձրագոյն ազգարարութեան), և քարոզիչ կարգեցաւ Բերայի ս. Երրորդութիւն եկեղեցւոյ, և նոյն պաշտօնի մէջ ի Տէր հանգեաւ 1892 Նոյեմբեր 17-ին, հաւատարապէս վայելելով քահանայից և ժողովրդեան սէրն ու համակրութիւնը։

Գարեգին սրբազան սոյն չորս տարի ժամանակամիջոցում օգտակար եղաւ եկեղեցւոյ ծառայութեամբ, վարելով կրօնական ժողովոյ փոխ-առենապետութիւնն արժանապէս և ընտրուելով երեսփոխան ազգային ժողովոյ, և անդամ Արմաշու դպրեվանուց խնամակալութեան, և այլ զանազան գործոց մէջ բարեկարգիչ հանդիսանալով։

Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանց՝ որչափ ի կեանս բարեհամբաւր էր, նոյնչափ բարի համբաւ և յիշատակներ կը թողու յետ աստի կենաց։

Իւր հեղինակութիւնքն անմահ արձան պիտի մնան իւր անուան, և դարուց ի դարս պիտի հռչակեն զինքն իբրև գործիչ ազգային դպրութեան։

Ահաւասիկ իւր գրական երկոց ցանկն տպագրութեան թուականաց կարգաւ։

1. Հնոց և Նորոց տպագրեալ 1874

---

[1]) Հոգելոյս Ներսէս պատրիարք սոյն թուականէն գրեթէ ութ տարի յառաջ եպիսկոպոսանալու վկայական տուած էր, բայց Սրուանձտեանց չէր վաղվաղած առ այն, համեստութեամբ։

2. Գրոց և Բրոց » 1874
3. Շուշան Շաւարշանայ » 1875
4. Մանանայ » 1876
5. Թորոս Աղբար Ա. Բ. » 1879
6. Համով Հոտով » 1884
7. Ընթերցարանք Ա. Բ.
8. Քրիստոնէական վարդապետութիւն, համառօտ։

Այս վերջինք կրկին տպագրութիւն ունեցած են։

Իսկ իւր հատուածներն տպդ. լրագրաց մէջ խիստ շատ են. Թիֆլիսի «Մեղու» լրագրի մէջ «Վարդ» սառագրութեամբ, և Կ. Պոլսոյ «Մասիս» լրագրի մէջ «Հայ երէց» անուամբ, իսկ «Արևելք»ի մէջ «Աշակերտ» սառագրութեամբ։

Իւր հաւաքածոյք ցրիւ կան ամեն պարբերական թերթերի մէջ. «Արևելեան Մամլոյ», «Երկրագունդի» և «Մասիս» շաբաթաթերթի մէջ։

Բայց այս ամեն բարոյական յիշատակաց վերայ Սրուանձտեանց սրբազան յաւելցուցած է եղեր նիւթապէս և մի բարձր առաքինութեան յիշատակ, որ յետ իւր մահուան միայն յայտնի եղաւ, կտակելով հազար (1000) օսմանեան ոսկւոյ մի կլորիկ գումար, հիմնելու համար Վանայ մէջ մի համեստ հիւանդանոց, և 30—40 ոսկւոյ գումար մի ևս ս. Եղիշէ պատմագրի դերեզմանին վերայ գմբէթ մը կառուցանելու և տապանաքար մը դնելու համար, այս սրտառուչ բանիւք կնքելով իւր կտակագիր.

«Իբրև մահկանացու միշտ պարտաւոր լինելով մեռնելու, «իբրև Քրիստոսի պաշտօնեայ արթուն գտնուելու համար, և «իբրև նպաստ մը ազգիս ընծայելու, սոյն կտակագիրս գրեցի «ի քաջառողջ վիճակի յաւուրս քարոզչութեան ս. երրորդու-«թիւն եկեղեցւոյ Բերայի»։

Յաւերժասցի՛ Յիշատակ Քո, ով բարեխիղճ պաշտօնեայդ եկեղեցւոյն Աստուծոյ, որ գիտացեր բարւոք գործածել Քեզ շնորհեալ քանքարն, և ազգէն ընծայեալ նուէրն ազգին կը դարձուներս հաւատարմաբար, ոչ ինքնդ շռայլաբար վայելելով, և ոչ այլոց վայելել տալու անիրաւութիւնն գործելով։

Օրհնեա՛լ լիցի յիշատակ արդարոյդ յաւիտեանս։

Վշտակիրդ ՅՈՎՀ. ՔՀ. ՄԿՐԵԱՆ

Տ. ԿՈՍՏԱՆԴԻՆ Գ. ԿԵՍԱՐԱՑԻ

154. Սսոյ ժողովին միւս գործն եղաւ նոր կաթողիկոսի ընտրութիւնը, որ եղեւ նոյն ինքն ժողովին գահերէցը, Կոստանդին եպիսկոպոս Կեսարիոյ կամ Կեսարացի Կոստանդին եպիսկոպոս։ Կ'երևի թէ ծաղկազարդին գումարուած ժողովը հապճէպով աւարտեց իւր գործերը, այնպէս որ յաջորդ կիրակիին (1307 մարտ 26) նորընտիր հայրապետը կարող եղաւ զատկական հանդիսութիւնները կատարել։ Կաթողիկոսի ընտրութիւնը առիթ կ'ընծայէ մեզի զննելու թէ 1307-ին ընտրուած Կոստանդինը, 1286-ին ընտրուած և 1289-ին մերժուած և Լամբրոնի մէջ բանտարկուած Կոստանդինի հետ նոյն անձն է։ Նոյնութիւնը պաշտպանած է Զամչեան (Զմչ. Գ. 311), և անոր հետևած են Բարէլլէթթի (Պէրոլ. Բ. 763) և Ալիշան (Սիսուան 106), և ուրիշ պատմութիւն գրողներ։ Սակայն մեր կարծիքով Կեսարացի Կոստանդինը տարբեր է Պրօնագործ Կոստանդինէն, և թէ այս մասին իրաւունք ունին Կալանոս և Սեղբոս, զորս Զամչեան և իւր հետևողները սխալած կը կարծեն։ Մեր կարծիքին առաջին հիմն է, որ 1286-ին ընտրուած Կոստանդինը, ժամանակակիցներէն կոչուած է Խորինվանաց առաջնորդ (Օրբ. Բ. 184). կամ Պրօնագործ (Սմբ. 125), այլ ոչ երբէք Կեսարացի, ինչպէս նորեր ուզած են անուանել (Առաք. 335. Զմչ. Գ. 284)։ Հաւանաբար Կատուկեցի լինելը Կապադովկացի կարծուած և Կեսարացիի փոխուած է։ Իսկ 1307-ին ընտրուած Կոստանդինը միշտ Կեսարացի կոչուած է, և ոչ երբէք Պրօնագործ (Սմբ. 127. 130)։ Եւ ոչ ալ ըսուած է թէ 1307-ին ընտրուածը կանխաւ կաթողիկոսութիւն ըրած մէկն է, և Նոյնիսկ Դավրիժեցին, որ Յակոբ Բ-ի աթոռ վերադառնալը կը յիշէ, Կոստանդինի մասին այդպիսի պարագայ մը չյիշատակեր (Առաք.

335)։ Սմբատ ալ որ ցաւ զգացած է Պրոնագործին անկումին համար, բնաւ անոր վերադառնալուն չակնարկեր, այլ 1307-ին ընտրուածը իբր բոլորովին նոր անձ մը կը նկատէ։ Իսկ Կեսարացի կոչումը պարզապէս Կեսարիոյ եպիսկոպոս եղած ըլլալէն առնուած է, և այդ տիտղոսով ալ Սսոյ ժողովին մէջ նախագահ բազմեցաւ (Զամչ. Գ. 307)։ Ուրիշ փաստ մըն ալ կը քաղենք Օրբելեանէ, որ ժամանակակից է և Պրոնագործէն ձեռնադրուած է, և վերջնոյս արկածներուն հետևած է, և զայն որոշակի կը զատէ 1307-ին ընտրուած Կոստանդինէն։ Պրոնագործին համար կը գրէ թէ գահընկեց ըլլալէ ետքը առանձնացաւ Գլխիրացի եկեղեցին, յետոյ Լամբրոնի մէջ բանտարկուեցաւ, և թէ 1289-էն սկսելով չորս տարի բանտի մէջ մնաց (Օրբ. Բ. 186)։ Այդ միջոցին Անաւարզեցին կաթողիկոսութիւն վարած է, և իւր օտարներու հետ միութեան նպատակը քայլնելու համար, ընտրութենէն անմիջապէս ետքը նուիրակութեան հանած է Կոստանդին եպիսկոպոս Կեսարու կոչուած անձը, որ բանտարկեալ Պրոնագործը չէր կրնար ըլլալ։ Արևելեայներ սոյն նուիրակին կ'ուզեն յանձնել իրենց ժողովական թուղթը, այլ Կեսարացի նուիրակը ոչ կամէր յանձն առնուլ զտարումն թղթոյն, բաղբաղելով պատճառս ինչ (Օրբ. Բ. 194)։ Այս ա Պրոնագործին ուղղութեան համաձայն չէ։

155. Սկեւռայ սրբարանը կամ մասունքներու պահարանը, Պրոնագործէն շինուած, զոր ընդարձակօրէն կը նկարագրէ Ալիշան (Սիսուան 107), ոչ երբէք կը հաստատէ Պրոնագործին և Կեսարացիին նոյնութիւնը, և ոչ ալ կը ստէ Օրբէլեանի պատմածները, ինչպէս կը կարծէ Ալիշան (Սիսուան 106)։ Սրբարանի շինութեան թուականն է ՉԽԲ 1293, երբ Պրոնագործը, երբեմն միաբան և աշակերտ Հռոմկլայի, և յետոյ նոյն տեղ հովուական աթոռ և գաւազան ստացած, կը գտնուի տեսուչ վանացն Սկեւռայ և առաջնորդ նոյն վիճակին, որ է Լամբրոնի թեմը։ Արդ 1293 թուականը ճշտիւ կը պատասխանէ Օրբելեանի յիշած չորեքամեայ (1289—1293) բանտարկութեան վերջանալուն։ Ճիշտ ալ Պրոնագործին, նախ շղթայակապ և յետոյ առանց կապանաց, չորս տարի Լամբրոնի մէջ բանտարկուած մնալէն ետքը, Հեթում զայն բանտէն կ'ազատէ և Սկեւռայ վանքը կը դրկէ իբր առաջնորդ և արքեպիսկոպոս Լամբրոնի։ Այս կերպով սրբարանի յիշատակարանին մէջ արդ բառը այժմ իմաստը կը ստանայ, և Օրբելեանի տուած թուականները կը հաստատէ։ Իսկ յիշատակարանին ոճը, և Հեթումը պատուով յիշելը, և Հեթումի համար աղօթելը, կատարելապէս կը յարմարի Պրոնագործին անյիշաչար ոգւոյն և առաքինի և հեզահոգի նկարագիրին։ Արդէն Օրբելեան պատմած

էր, որ Պրոնագործը նոյն իսկ հայրապետանոցէ մերժուած պահուն հանդիսապէս Հեթումին և իւր թագաւորութեան համար բարեմաղթութիւններով կ'աղօթէր (Օրբ. Բ. 185)։

156. Կրնամք ուրեմն վստահօրէն ըսել թէ Կոստանդին եպիսկոպոս Կեսարիոյ, որ Սսոյ ժողովին նախագահեց և նոյն ժողովէն կաթողիկոս ընտրուեցաւ, է նոյն ինքն Անաւարզեցիէն նուիրակ ղրկուած եպիսկոպոսը, և ոչ նոյն պահուն բանտարկուած Պրոնագործ կաթողիկոսը, որ չորս տարի արգելական ապրելէ ետքը, Հեթումի շնորհիւ Սկեւռայ առաջնորդ կը լինէր։ Դիտելու արժանի է ևս, որ սրբարանի յիշատակարանը, թէպէտ կը պատմէ Հռոմկլայի առումը և Ստեփանոս կաթողիկոսին գերութիւնը, և աղօթքներ կընէ Հեթում թագաւորին համար, բնաւ ժամանակին կաթողիկոսը չյիշեր, այսինքն Անաւարզեցիին անունը չտար, քանի որ նա Պրոնագործին յայտնի հակառակորդն էր։ Կը դիտեմք ևս, որ Սսոյ ժողովին մէջ, ուր բոլոր Կիլիկիոյ եպիսկոպոսները ամբողջաբար ներկայ են, միայն Լամբրոնի եպիսկոպոսը և Սկեւռայ առաջնորդը չյիշուիր, որ մեր տեսութեամբ նոյն ինքն Պրոնագործն էր, և հարկաւ չէր ուզած ժողովին մասնակցել· ապա թէ ոչ Լամբրոնի աթոռը նախապատիւներէն էր, և մոռցուած չէր կրնար ըլլալ։ Վերջապէս վճռական փաստ մըն է, որ Օրբելեան չէր կրնար չճանչնալ իւր ձեռնադրող կաթողիկոսը· և չէր կրնար հետևապէս զայն շփոթել նուիրակութեամբ եկող եպիսկոպոսին հետ։ Այդ քանի որ 1293 թուականին երկու տարբեր Կոստանդիններու միանգամայն գոյութիւնը հաստատուած է, Պրոնագործը Լամբրոնի մէջ բանտարկուած և Կեսարացին իբր նուիրակ Արևելք շրջագայող, այլևս երկուքը իրարու հետ շփոթել ներեալ չէ, և հետևաբար 1307-ին կաթողիկոս ընտրուող Կեսարացի Կոստանդին եպիսկոպոսը, նախկին կաթողիկոս Պրոնագործը չէ, այլ նուիրակը։ Արդէն Կեսարացին կանուխէն Անաւարզեցիին մտերիմն ու գործակիցն էր, և նորա նպատակին օգնականը, և Հեթում ու Լևոն յարմարագոյն մէկը չէին կրնար գտնալ, որուն յանձնէին Անաւարզեցիին ծրագիրին գործադրութիւնը և հայրապետական աթոռը լատինամիտ ուղղութեան մղելու գործը։

157. Ըստ այսմ, Կոստանդին Դ. Կեսարացին, և ոչ ևս Կոստանդին Բ. Պրոնագործը, Սսոյ ժողովոյն ձեռքով կաթողիկոսական աթոռը բարձրացաւ (1307), և զայն կառավարեց տասնուհինգ տարի։ Այդ միջոցին եղելութիւնները քաղել ուզելով, նախ պիտի յիշենք Հեթումի ու Լևոնի եղերական վախճանը։ Ծռազատկին տարին հանդիպած էր Հռոմկլայի առումը։ Սսոյ ժողովին տարին ալ տեղի ունեցաւ թագաւորին և թագաւորահայրին սպանութիւնը։

Սսոյ ժողովը մեծ շփոթ թողուցեր էր ազգին մէջ, վասն զի ոչ միայն Արեւելեայք բովանդակօրէն, այլ ժողովին մասնակցող եպիսկոպոսներն ալ վիճակին դառնալէն ետքը հակառակ կարծիք յայտնած էին, և բոլոր Կիլիկիա կը դժուարանար նոյն ժողովին որոշումներուն հետևել։ Հազիւ թէ Սիս քաղաքին մէջ թագաւորն ու կաթողիկոսը ձեռք ձեռքի տալով կարող կ'ըլլային նոյն կանոնները գործադրութեան մտցնել։ Կրօնական պատճառներէ ծագած գժտութիւններ աւելի խիստ կը լինին և ատելութիւնները աւելի կատաղի. ուստի անհաւատալի չէ, որ ճիշտ այդ պատճառին երեսէն ներքին գժտութիւններ զօրացան ազգին մէջ, և նոյն իսկ հայ իշխաններ Հեթումի ու Լեւոնի դէմ դաւաճանութիւն նիւթելու ձեռնարկեցին (Զամչ. Գ. 313)։ Օտար պատմիչներ, ներքին պարագաներու անտեղեակ, հին վրէժխնդրութեանց կուտան այդ դաւաճանութիւնը։ Պիլարդու զօրավար, Ղարփանդա խանին Թաթարաց, Անաւարզայի վրայ եկաւ, և երկու թագաւորները խարդախութեամբ իրեն բանակը հրաւիրելով սպաննեց ուրիշ քառասուն իշխաններու հետ (1307 նոյեմբեր 17)։ Ըստ այլոց Պիլարդու հարիւր սնդուկներու մէջ զինեալ զինուորներ խարդախութեամբ բերդի մէջ մտցնելով, ասոնց ձեռք Հեթումն ու Լեւոնը խողխողել տուաւ (Դարդել 24)։

158. Անտէրունջ գահին տէրութիւն ըրին Հեթումի և Լեւոնի հօրեղբայրներ։ Ալինախ իշխան՝ Թաթարաց խանին դիմելով Պիլարդուի դատապարտութիւնը ընդունեց (1307), և թէպէտ կրնար ինքն թագաւորել, բայց աւելի ուզեց թագաւորութիւնը յանձնել իւր Օշին եղբօր, որ Մեծ Հեթումին եօթներորդ զաւակն էր (1308)։ Սակայն Դարդելի պատմածին համեմատ, Ալինախի կանուխ մեռնելովը Օշին թագաւորեց (Դարդ. 26)։ Օշինի թագաւորութիւնը տևեց իբր տասուերեք տարի, և մեռաւ (1320 յուլիս 20), տասը տարեկան Լեւոն զաւակ մը թողլով, զոր ժառանգ հռչակած էր, չորս անձերու խնամակալութեան ներքև, որք էին, Օշին տէր Կոռիկոսոյ, Պաղտին մարաջախտ, Կոստանդին վերջնոյս եղբայրը, և Հեթում սենեկապետ։ Ասոնց մէջէն Օշին Կոռիկոսցին գլխաւորութիւն վայելեց, և վախճանեալ Օշին թագաւորին երկրորդ կնոջ, Յովհաննա թագուհիին հետ ամուսնանալով, թագաւորութեան գրեթէ տէրը դարձաւ, քանի որ Լեւոն մանուկ թագաւորն ալ Օշինի առաջին կնոջմէն Զապէլէն ծնած էր (Դարդ. 28)։

159. Օշին թագաւոր հզօր պաշտպան հանդիսացաւ Սսոյ ժողովին նորութիւններուն, իրեն օգնական և խորհրդական ունենալով Կոստանդին Կեսարացի կաթողիկոսը, զոր ոչ իզուր Կոստանդին հերձուածող կ'անուանէ Դավրիժեցին (Առաք. 335)։ Օշին

տեսնելով որ շփոթութիւնը կը ծանրանայ և սպառնալից կը դառնայ, հաւանեցան որ նոր ժողով մը գումարուի, և եթէ ուղղելիք ինչ կայ քննուի և որոշուի։ Սակայն ինքն թագաւորը քաղաքէն հեռացաւ, և կաթողիկոսը չկրցաւ որոշ և օրինաւոր դիրք մը պահել, զի բռնած ճամպէն ետ դառնալ չէր յօժարեր, և Սսոյ կանոնները անգամ մըն ալ հաստատել չէր համարձակեր։ Այս պատճառով դժգոհ եպիսկոպոսներ և վարդապետներ, եկեղեցականաց և աշխարհականաց բազմութիւններ, մինչև իսկ կիներու խումբեր, շարժումներ կազմակերպեցին, և տեղ-տեղ խմբուելով բողոքեցին նորութեանց դէմ և մերժեցին Սսոյ ինը գլուխները իբր օտարամուտ և ազգային եկեղեցւոյ հակառակ։ Ասոնց մէջ աւելի նշանաւոր եղան Աղանայի (1309) և Սսոյ (1311) համախմբութիւնք, որք ժողովի կերպարան առին, թէպէտ առանց կաթողիկոսի, և նոյն իսկ կաթողիկոսին և թագաւորին կամքին հակառակ գումարուած էին։ Օշին թագաւոր և Կոստանդին կաթողիկոս զայրացան այդ ցուցմանց դէմ, և թագաւորը կաթողիկոսին խորհրդով սկսաւ բռնութիւններ գործածել հակառակողներուն, մանաւանդ եպիսկոպոսներու և վարդապետներու վրայ, շատեր բանտարկուեցան զանազան բարուրանօք, աւելի շատեր աքսորուեցան, ոմանք ալ գաղտնաբար սպանուեցան։ Այս միջոցին էր, որ Երուսաղէմի հայ աթոռը, որ Վկայասէրէն մինչև այն ատեն կաթողիկոսաց անմիջական իշխանութեան ներքև էր, և եպիսկոպոսէ աւելի անուն չէր գործածեր, պատրիարք անունը առաւ, կաթողիկոսութեան հետ յարաբերութիւնը խզեց, և Եգիպտոսի սուլտանէն հրովարտակ ստացաւ և հայ հաւատացեալներու բացարձակ գլուխ ճանչուեցաւ։ Երուսաղէմի առաջին հայ պատրիարք կը համարուի Սարգիս եպիսկոպոս (1311), և Երուսաղէմի նոր պատմութիւնն ալ անկէ սկսելով կը կազմէ Երուսաղէմի հայ պատրիարքներուն շարքը (Յովհ. Ա. 200)։ Միւս կողմէն գտնուեցան քանի մը եպիսկոպոսներ, որ զանազան պատճառներով յորդորուեցան Սսոյ կանոնները պաշտպանել, և ասոնք կրնան նախընթացներ համարուել ունիթոռական շարժման, որ այս ժամանակէն սկսաւ կազմուիլ։ Ժողովուրդը ընդհանրապէս ասոնց դէմ ելաւ, և մինչև իսկ բռնութիւններու դիմեց, և յիշատակութեան արժանի է, Կարնոյ Սարգիս եպիսկոպոսին, բաժակին ջուր խառնելուն համար, ժողովուրդէն սպանուիլը (1311)։

160. Օշին թագաւոր թէ իւր քաղաքական շահերուն և թէ իւր կրօնական ուղղութեան համար պէտք ունէր մշակել Լատինաց յարաբերութիւնները, և երբ ինքն յօժարութեամբ ասոնց գիրկը կը դիմէր, Կղեմէս Դ. պապն ալ (1305—1314) շարունակ թղ-

թակցութիւններով և խոստումներով կը քաջալերէր զայն յառաջել միութենական ուղղութեան մէջ։ Վեց լատին կրօնաւորներ Փրանկիսկեանց կարգէն, պապական կոնդակով (1311 յունիս 22) պալատան մէջ կը մնային իբր աքսորական խորհրդականներ և խումբ մըն ալ Դոմինիկեան կրօնաւորներ, Յովհաննէս ԻԲ. պապին կոնդակով (1318 յունիս 8) կը յղուէին առ Օշին իբր ուսուցիչք լատին լեզուի և կրօնի։ Այս պարագաները բաւական են յայտնել Օշինի արքունեաց մէջ տիրող ուղղութիւնը, որուն գաղտնապէս, բայց կատարելապէս համամիտ էր Կիսարացի Կոստանդինը։ Թագաւոր և կաթողիկոս և իրենց խորհրդականներ մտածեցին երկրորդ ժողովով մը նոր ոյժ տալ Սսոյ կանոններուն և տրկարացնել եկեղեցականաց և ժողովրդականաց հակառակութիւնը, որոնք կը զօրանային Ադանայի և Սսոյ անկաթողիկոս ժողովներու որոշումներով, ուր Սսոյ ժողովին կանոնները մերժուած էին։ Նոր ժողովը հրաւիրուեցաւ, այլ կատարեալ անյաջողութիւն մը եղաւ։ Երկար սպասելէն ետքը, հազիւ 17 եպիսկոպոսներ, 2 վանահայրներ և 5 վարդապետներ հաւաքուեցան Ադանա (1316), և հաստատեցին Սսոյ կանոնները, Անաւարզեցիի կոչուած նամակին շարունակութեան համեմատ։ Ներկայներէն ութը՝ Սսոյ ժողովին գտնուող Կիլիկիոյ եպիսկոպոսներէն էին, վեց ևս Կիլիկիայէ նորեր, և միայն երեք եպիսկոպոս Արեւելքի վիճակներէն էին, որք են Տարոնի և Կարսի և Սալմաստի եպիսկոպոսներ և վերջինը հաւանաբար Արտազու եպիսկոպոս Զաքարիայի աշակերտներէն։ Այսպիսի աննշան թուով եպիսկոպոսներ, այնպիսի շփոթ ժամանակի մէջ, այսպիսի փափուկ խնդրոյ վրայ որոշում տալը կատարեալ յանդգնութիւն էր Օշինի և Կոստանդինի կողմէ, սակայն պէտք չէ մոռնալ, որ լատին կրօնաւորներ էին արքունեաց խորհրդականները։

161. Ադանայի ժողովին որոշումը, ոչ միայն Սսոյ կանոններուն ոյժ մը չաւելցուց, այլ և առաւելօք սաստկացուց հակառակութիւնը, մինչև ինքն Օշին ստիպուեցաւ, այլ ևս բռնադատութիւն չընել, և Սսոյ կանոնները, որք Սսոյ քաղաքէն ու արքունիքէն դուրս հազիւ թէ ընդունուած և գործածուած էին, բոլորովին իսկ մոռացութեան ինկան։ Այլ չգադարեցան լինել քար գաղթակղութեան ապագայ տարիներու, և կռուան մը Կիլիկիոյ լատինամիտ և լատին թագաւորներուն, որով կրցան ոյժ տալ իրենց օտարասիրութեան։ Օշին թագաւոր, իւր առաջին կնոջ Զապէլի կամ Աննայի մահուանէ ետքը, նորէն ամուսնացաւ Տարանտոնի կոմսին Յովհաննու աղջկան հետ (1316), որով աստիճան մը ևս լատինականութեան մօտեցաւ։ Կապանի Յակոբ եպիսկոպոսը,

որ Աղանայի ժողովականներէն էր, նուիրակ ղրկուեցաւ պապին յԱւինիոն, Ստեփանոս իշխանի և Գրիգոր թարգմանի ընկերակցութեամբ (1317), որ Կիլիկիոյ հայերուն նպաստ խնդրելու առթով, բոլորովին հռովմէադաւան հոգւով դաւանութեան գիր մը ներկայեց պապին, իբր յանուն թագաւորին և կաթողիկոսին։ Յովհաննէս ԻԲ. պապը (1316—1334) հաստատեց զայն, և ևս քանզևս հռովմէականութեան մօտենալու միտումը քաջալերեց առանձինն թուղթերով առ Օշին, առ Կոստանդին, առ Յովհաննա թագուհի, առ Կաֆացի Հայս, և առ այլս։ Խոստացաւ ևս արտաքին օգնութիւն, յորդորականներ գրելով առ Փիլիպպոս թագաւոր Գաղղիոյ, առ Հռուբերտոս թագաւոր Սիկիլիոյ, և առ այլս, սակայն ասոնցմէ և ոչ մին շարժուեցաւ, թէպէտև Օշին և Յովհաննա իրենք ալ ուղղակի գրեցին նոյն թագաւորներուն։ Պապն ալ վերջապէս գրեց թէ Արևմուտք ներքին պատերազմներով զբաղուած է, և առայժմ չկրնար Արևելքին օգնել (1320)։ Մինչ այսպէս Լատիններ Հայերը անօգուտ կերպով կը գրգռէին, Եգիպտացիք լատին Խաչակիրներուն համակիրները և հետքերն ալ ջնջելու նպատակով յարձակեցան Հայոց վրայ, Կիլիկիա մտան, և աւարելով ու աւարելով ետ դարձան։ Այդ միջոցին մեռաւ Օշին թագաւոր (1320), յաջորդ թողլով իւր տասնամեայ Լևոն որդին, չորս անձերու խնամակալութեան ներքև, ինչպէս արդէն յիշեցինք, որոնցմէ Կոռիկոսցի Օշին պայլ, երկրին կառավարութիւնը ստանձնեց, այրի թագուհի Յովհաննայի հետ ամուսնանալով։

162. Խնամակալութեան առաջին ժամանակները անցան շարունակ Եգիպտացւոց հետ պատերազմներով, և Հայերը տկարանալով, նորէն Արևմտեայց օգնութեան դիմեցին, բայց ապարդիւն խոստումներէ աւելի բան մը ձեռք չկրցան ձգել։ Այս նաւահանգիստին և բերդին աւերումը (1322 ապրիլ 23) մեծ տպաւորութիւն գործեց Եւրոպայի վրայ, և Յովհաննէս ԻԲ. պապ, իր պալատան խորհուրդին համեմատ, փութաց գրել Գաղղիոյ թագաւորին, յորդորելով որ Հայոց օգնութեան հասնի և եկեղեցիներու մէջ ալ ընդհանուր աղօթքներ հրամայեց։ Զինուորական օգնութիւն չգնաց, այլ օգնութիւն ըլլալով լոկ Այասի աւերակները նորոգելու համար դրամական գումար մը ղրկուեցաւ Հայերուն։ Ճիշտ այս օրերուն մէջ վախճանեցաւ Կոստանդին Գ. Կեսարացի կաթողիկոսը, առանց իւր ետևէն արդիւնքի մը հետքը թողլու, և իւր բնական գործունէութիւնը լատինասէր հակամիտութեան վտանգաւոր նպատակին ծառայեցնելով։

Տ. ԿՈՍՏԱՆԴԻՆ Դ. ԼԱՄԲՐՈՆԱՑԻ

163. Կոստանդին Դ.-ի մահուանէ ետքը, տարւոյն վերջին օրերը (1322 դեկտեմբեր 25), Լևոն մանուկ թագաւորին հրամանով և եպիսկոպոսաց համահաճութեամբ, կաթողիկոս օծուեցաւ Կոստանդին Դ. Լամբրոնացի, որ իբր եպիսկոպոս Սսոյ, թէ Սսոյ և թէ Ադանայի ժողովներուն մէջ, նախագահէն ետքը առաջին ատոռը գրաւած էր, և Անաւարզեցիին և Կեսարացիին լատինամիտ ուղղութեան հաւատարիմ հետևող էր։ Երբ Եգիպտացիք ահեղ բազմութեամբ նորէն Կիլիկիոյ վրայ յարձակեցան (1323), և երկիրը աւերեցին Լատիններուն վրէժը լուծելու դիտմամբ, Լևոն թագաւոր և Օշին խնամակալ և Կոստանդին կաթողիկոս խոնարհամիտ գիրերով և հպատակութեան ցոյցերով նորէն պապին դիմեցին, միշտ մեծամեծ ակնկալութիւններով։ Սակայն Լամբրոնացի կաթողիկոսը լաւ խորհուրդ մը յղացաւ ուղղակի թշնամին ողոքելու, և անձամբ Հալէպ գնաց Եգիպտոսի սուլտանին հետ բանակցելու, և յաջողեցաւ ժամանակաւոր խաղաղութեան դաշինք մը կնքել, որով պահ մը շունչ առաւ Կիլիկիա։ Բայց որովհետև Հայեր Լատիններէ յոյսերնին չէին կտրեր, և օգնութեան ակնկալութեամբ անոնց հետ բանակցութիւնները կը շարունակէին, Եգիպտացիք կասկածեցան թէ Հայեր գաղտնի պատրաստութիւններ կը տեսնեն, և ատեն չտալու համար կանխեցին և Կիլիկիա յարձակեցան, մեծամեծ նեղութիւններ և աւերումներ պատճառելով երկրին (1324)։ Կոստանդին Տ. Լամբրոնացիի հայրապետական և վարչական գործունէութեան վրայ տեղեկութիւններ չեն հասած, միայն գիտեմք թէ չորս տարի պաշտօնավարելով, խաղաղութեամբ վախճանած է (1326)։ Իւր թաղման առթիւ կը յիշուի, թէ երբ Դրազարկի վանքին մէջ Բարձրբերդցի Կոստանդին Ա. կաթողիկոսի դամբանը բացին, որ 60 տարի առաջ թաղուած էր, գտան զշուրջառն փռած, և զպավլին (պալիում) խայտնեն շէն, և զգաւազանն և զմազն, և ոսկր ամենևին չգտան, և փառք տուին Աստուծոյ (Սմբ. 130)։ Մեք չեմք կրնար ճշդել, թէ ինչ չափ ստոյգ, և ինչ տեսակ պարագայ մըն է պատմուածը։

Մ. ԱԵ. ՕՐՄԱՆԵԱՆ

ՇՆԱՅԻՆ ԿԱՐԳԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՐԳՈՒՄ Կ. ՊՕԼՍՈՅ ՄԷՋ

(† ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆԻ)

Կ. Պոլսոյ բնակիչներուն կարգերը, ոչ մի մայրքաղաքներու կամ գլխաւոր քաղաքներու բնակիչներու կարգերուն չեն նմանում, որոնք արդէն ծանօթ են բանգէտներուն, բայց Կ. Պոլսոյ բնակիչներուն կարգերն անծանօթ են. նախ նրա համար որ մի օրինաւոր և հաստատուն կարգ չկայ, հապա պատահական և ինքնիրան կազմուած։ Այսպէս, առաջին կարգը տիրող կարգն է, այսինքն մահմեդականները։ Երկրորդ կարգը եւրոպացի գաղթականները կամ եւրոպական տէրութեանց հպատակները, (մանաւանդ գերմանացիք)։ Երրորդ կարգն են յոյները, լատին կամ ֆրէնք կոչուած ժողովուրդներն ու կաթոլիկները։ Չորրորդ կարգը հայք և հրէայք։ Ի հարկէ ատոնց մէջ ստորաբաժանումներ էլ կան։ Ինչպէս մահմեդականաց մէջ պաշտօնատէրները և մանր ծախող խանութպաններն, իրանց ապրանքը շալակին փողոցներում ծախողներն բեռնակիրներն, էշուձի քշոցները, բայց դրանց ամենքն էլ աստիճանաւոր են, նշանակիր են, փաշա, բէկ, էֆէնդի, աղա են ու խօջաքեան և այլն։

Դրանցից զատ մի ուրիշ կարգ էլ կայ Կ. Պոլսում, այսինքն շուն բնակիչները, որոնց համար, կարելի է ասել թէ ամեն կարգի բնակիչներուն վրայ մեծ ազատութիւն և արտօնութիւն են վայելում օսմանցոց մայրքաղաքում և, որոնց վրայ է իմ խօսքս։

Ամեն Կ. Պոլիս այցելող օտարազգիներ, անշուշտ տեսած են այդ անհուն քաղքի ամեն կողմերում ման գալիս այդ շներին, որոնք լիքն են փողոցներում, հրապարակներու վրայ, մանաւանդ մսավաճառներու ճաշարաններու առաջը, մզկիթներու բակերում, փաշաներու ապարանքների դռների առաջ և այլն։ Եւ ի հարկէ ամեն մարդ համոզուած է թէ մահմեդականները, մանաւանդ թուրքերը սիրում են ու պաշտում շներին։ Կարելի չեղաւ ինձ գիտենալ թէ մահմեդականք իրանց գուրանին անասուններու վրայ գութ ունենալու պատուէրից զգացու�ծ՝ այդ բանն են անում

շներուն, եթէ ոչ այն պատճառով, որ կարծում են թէ շները մի տեսակ թռչուններու նման բախտաբեր կենդանիներ են, կամ թէ ոչ իրանց մարգարէն սիրելուն դրանց, կամ թէ իրանց սրբազան պատմութիւնը շներու վրայ խօսելուն։ Բայց սմանք էլ պնդում են թէ Կ. Պոլսոյ Թուրքերուն այս աստիճան յարգ ու պատիւ տալու պատճառը շներուն՝ այս է եղել, որ իրանց աշխարհակալ Սուլթան Մուհամէտ իր քամակից շներու մի մեծ զունդ է ման ածելիս եղել, որոնք իբրև յաղթող ս. Ռոմանոսի դրան ճեղքից ներս են մտնում Կ. Պոլիս և ճամպայ ցոյց տալիս նրան։ Եթէ չեմ սխալւում, կարծեմ այդ բանն է, որ Թուրքերը սրտանց սիրում են շներուն և շատ Թուրքեր կտակով մեծ գումարներ են թողնում, ասում են, դրանց անկեան համար։ Երբ Սուլթան մէջիդ քշել է տուել բոլոր շները Մարմարա ծովու մի կղզում, Թուրք ժողովուրդը տրտնջել է այդ բանի համար և երբ շները ետ են դարձել, մեծ հանդիսով ընդունելութիւն է արել դրանց։ Թուրք կառավարութիւնը խռովութեան պատճառ չը լինելու համար, թողել է շներուն, որ իրանց տեղը հանդիստ յաւիտեան մնան*)։ Սակայն ինչպէս որ շունը, ըստ զուրանի, պիղծ կենդանի է և մահմեդականը դրան ապաստան տալով, կարծում է որ իր տունը կը պղծուի, այդ պատճառով, Կ. Պոլսոյ անթիւ, անհամար շներից, ոչ մինը իր տէրը չունի։ Ամենքը մէկանց մեծ հասարակապետութիւն են կազմում. մի շատ դատարկապորտներով, անվզնոց, անպաշտօն, անանուն, անտուն և առանց կարգի ու սարքի։ Իրանց ամեն գործ փողոցումն են կատարում. իրանց համար ամեն փողոցներում փոքրիկ խշտիկ կամ որջեր են շինում ու դրանց մէջ են քնում, ուտում և ծգնում, իրանց լակոտներուն կաթ տալիս և այդ տեղումն էլ սատկում են և ոչ մէկը դրանց անհանգիստ չէ անում։

Նրանք են փողոցներու, քուչաներու և ճամպայներու տէրե-

---

*) Շատ տարիներ առաջ, իմ ճամբորդութեանս մէջ, պատահեց որ մի օր նստած էի Աղէքսանդրիայի մի սրճարանում ծովափի վերայ. տեսայ որ եզերքի մօտ տաս քսան բեռ կրող մեծ նաւակներ են շարուած և ֆէլաղաները շներին կրում են դրանց մէջ, հարցնելով իմացայ, որ Եգիպտական կառավարութիւն հրաման է արել, որքան շուն որ կայ քաղքի քուչաներում հաւաքեն ու Աբուխիտ բերդում տանեն, խեղդեն և ամեն մի շուն բերող ֆէլաղայի տաս փարայ վճարեն։ Զարմանալին այն էր, որ շներն անկապ էին բերում, մի կողմէն որ նաւակներում էին դնում դրանց, միւս կողմէն նրանք ծով էին քցում իրանց ու լող տալով ցամաք էին դուրս գալի, որոնց ֆէլաղաները նորից բռնում ու նաւակ էին բերում։

ը։ Եւրոպու քաղաքներում շունն է ձիերուն ու մարդկանց անցնելու ճամպայ տուողը։ Կ. Պոլսում, ընդհակառակ, մարդիկ, ձիերը, էշերը մի պտոյտ են անում շներու վրայ չկոխելու համար։ Այդ մայրաքաղաքի ամենից անցուկ և բանուկ փողոցներում, չորս հինգ շուն բոլորակ կազմած քնում են նոյն փողոցի բուն մէջ տեղը և մի փողոցի ժողովրդին բաւական պտոյտ են անել տալի իր ճամբան գնալիս։ Միևնոյն բանը Պէրայի, Կալաթայի, Կ. Պոլսոյ մէջ ու ամեն տեղ պատահում է։ Անպատճառ շներուն յարգանք տալու համար չէ, որ հանգիստ են թողնում նրանց, հապա այն պատճառով, որ բազմաթիւ են, թէ որ կամք լինի մէկուն իր ճամպու վրայէն քշելու նրանց, պէտք է որ նա տանից դուրս գալուց մինչև տուն դառնալը, ուրիշ բան չանի, հապա ոտքով կամ ցպով շներուն զարնէ ու զարնէ։ Դրանք այն ժամանակ են տեղերից շարժւում, երբ մի չորս ձիանի կառքի գալը տեսնում են, որ քամու նման կերթայ ու ժամանակ չունի ճամպայ փոխելու պտոյտ անելով։ Միւս երկձի կառքերուն համար վեր են կենում, բայց ոչ վերջին բոպէից առաջ, հապա այն վայրկենին, երբ ձիերուն ոտները իրանց գլխին դպչելու մի մատ է մնացել։

Ծուլութիւնն երևի նշանն է Կ. Պոլսոյ շներու բնութեան. հինգ—տասը շուն մէկանց կոլորակ շարք են շինած ճամպու վրայ ու կզկտած շնթռկում են, այն կերպ, որ էլ շան չեն նմանում, հապա աղբերու դէզ և այդպէս ողջ օրը քուն՝ են լինում, այդ անհամար եկող, գնացող անց ու դարձ անողներու և ամեն տեսակ աղմկի, շփոթուկի մէջ։ Ոչ անձրևից, ոչ արևից, ոչ ցրտից իրանց տեղերից չեն շարժում։ Երբ ձիւն է գալի, ձեան ներքև են մնում, երբ անձրև՝ ցեխում թաղուած են մնում, այն աստիճան որ երբ յետոյ վեր են կենում, կարծես յատուկ կաւում են թաթղուել և չեն երևում ոչ աչքերը, ոչ ականջները և ոչ ունքերը։

Կ. Պոլսոյ շնային բնակիչներու կարգը, թաղերու, փողոցներու և քուչաներու վրայ է բաժնուած, մարդկային բնակիչներու նման։ Ամեն թաղ, ամեն փողոց ու քուչա իր շնային բնակիչներն ունի, կամ թէ բաւական թւով, իրար աղգական ու բարեկամ շներ, որոնք եկել են ու տիրել այդ թաղին ու փողոցին և այդ տեղից երբէք չեն հեռանալ և ուրիշ տեղ չեն երթալ և այդ փողոցում օտարական շներու մտնելը չեն թողնիլ։ Ունեն իրանց պահնակ զինուորներն և իրանց դիտատեղին ու սպասատեղին, շրջում են ու դիտում։ Վայ միւս թաղի այն շան, որ անօթութենից ստիպուած իր հարևաններուն իշխանութեան երկիրն է յանդգնում մտնել, դիւահարած հրոսակներու մի խումբ վրան

է ընկնում ու թէ որ բռնում են նրան, տեղն ու տեղը հաշիւը տեսնում են, թէ որ կարող չեն լինում բռնել, կատաղութեամբ վռվռթոչով, հաչելով նրա քամակից են վազում մինչև թաղին սահմանագլուխ և ոչ դենը, վասնզի թշնամու երկիրը միշտ յարգի է և ահարկու։

Դրանց իրարու տուած պատերազմներու մասին, մի ոսկորի համար կամ քածի, կամ իրանց երկրի բռնաբարութեան համար մի գաղափար տալ չէ կարելի։ Ամեն վայրկեան տեսնում ես շներու մի հրոսակի կատաղութեամբ յարձակուելը մի ուրիշ կատղած խմբի վրայ, իրար հետ խառնուած և հողով, ցեխով ծածկուած և յետոյ սկսելը հաչել, ֆնգֆնգալ ու կատղած գոռում կոչում հանել խլի ականջները բաց անելու տստիճան։ Ապա երբ ցրւում են, իրանց վեր հանած փոշին ցնդում է, տեսնում ես գետնի վրայ փռուած պատերազմին զոհ գնացողները։ Սէր, նախանձ, մենամարտութիւն, արիւն, կոտրած թաթեր, պատռտած ականջներ, ամեն օրուայ դիպուածներ են։ Երբեմն շներն այնքան բազմութեամբ հաւաքւում են մի խանութի առաջ, այն գոռում գոչում են յարուցանում, որ խանութպանը՝ իր մանչերու ձեռքով ստիպուած է լինում երկաթ ձողերով կամ թէ աթոռներով զինուել և յարձակողական ելք անել դրանց վրայ ճամպայ բաց անելու համար։ Այդ ժամանակ մէկուն գլխին, միւսին ողձուկին, մի ուրիշին փորի կամ թաթի ցաւերը բռնում են և այնպէս ոռնում են ու ֆնգֆնգում, որ երկնքի կամարը ցածրն են իջեցնում։ Պէրայի ու Կալաթայի մէջ մանաւանդ, այդ խեղճ անասուններն այնքան են ջարդուած, որ էլ վարժուած են ծեծ ուտել։ Ամեն անգամ որ մի փայտ կամ գաւազան են տեսնում կամ թէ հովանոցի ձայնը քարի դպչելուն՝ փախչում են կամ թէ փախչելու են պատրաստւում և երբ պառկած ու քնած են երևալու լինեն, իրանց աչքերից մին կիսաբացին թողնում և իրանց թերթերունքներու տակից դիտում են, ոքքան հեռուն և որքան երկար ժամանակ որ պէտք է լինում. որևէ թեթև շարժում, որ գաւազանի կամ փայտի նմանութիւն ունենայ։

Թէ որ ուղենաս մի փոքր քաղցրութեամբ վարուիլ հեռները և տեղի տաս նրանց, իսկոյն տաս-քսան շուն քո մօտն են վազում խայտալով, քնքշութեամբ ղողանջելով պոչները օրօրելով և ուղեկից են լինում քեզ, իբրև իրանց վեհանձն պաշտպանին մինչև իրանց փողոցին տուռը, երախտագէտ և զուարթ աչքերով։ Շներու վիճակ Պէրաում ու Կալաթաում վատթար է։ Դրանք, ինչպէս ամեն բան Կ. Պոլսում, մարդուս մտքում պատմական յիշատակներ են զարթեցնում։ Սուլթան Պայազէտի հռչակաւոր որ-

սի շները ծիրանի տապճակներով ու մարգրիտներով բանացած մանեակներով Ողիմպոսի կայսերական անտառներու մէջ վազվըզում են եղել։ Ընկերական վիճակի ինչ մեծ տարբերութիւն, համեմատելով Կ. Պոլսոյ շներու վիճակին հետ։

Կ. Պոլսոյ շներուն դժբաղդ վիճակը մի մասնով էլ իրանց տգեղութիւնից է, որովհետև գրեթէ ամենքն էլ բարակներու (վազկան շներ) կամ գայլերու ցեղիցն են և թէ գայլի թէ աղուիսու նմանութիւն ունին, կամ թէ ոչ մի էակի չեն նմանում. հապա պատահական զուգաւորութեան սարսափելի ծնունդներ են տարօրինակ գոյներով։ Մսագործի շներն այնքան լղար են, որ քսան քայլ հեռանց կարելի է նրանց ողնաշարքը համրել։ Մեծ մասը բացի իրանց լղարութիւնից, կատաղի կռիւներից այն վիճակին են հասած, որ եթէ չքայլեն, ջարդուած շներու կմախներու տեղ կառնուին։ Շատերուն պոչն է կտրած, ականջը պոտռած, կըռնակը սկրթուած, ճեղքուած, վիզը կծուած, աչքը հանուած, կուր կամ կաղ, վէրքերով լիքը, ճանճերից գարաւներից խայթուած. վերջապէս ծայրագոյն վիճակի հասած պատերազմից, քաղցածութիւնից, տարփութիւնից, վիրաւորուած փախստականներ են, կարելի է ասել։ Պոչը որ զուգսի համար անդամ է շան, հազիւ թէ գտնուի մին, որ իր պոչը ամբողջապէս երկու ամսուց աւելի պահած լինի իր կեանքում։ Խեղճ կենդանիներ են, որ մի քարսիրտ կարող են կակղեցունել, սակայն երբեմն այնպէս տարօրինակ կերպով են բզկտուած ու կծոտուած, ու այնքան անճոռնի կերպով քայլում ու տգեղ շարժմունք են անում, որ մարդ իր խնդալը բռնել կարող չի լինել։

Իրանց ամենէն վատ պատիժը՝ ոչ կռիւն է, ոչ անօթութիւնը, ոչ էլ փայտի հարուածները, հապա մի անգութ սովորութիւն, որը կար ու կայ մինչև այսօր Պէրայի ու Կալաթայի մէջ։ Շատ անգամ, Պէրայի բնակիչները զարթնում են յանկարծ իրանց կողինքում մի դժոխային շշկոցից ու իրանց պատուհանը բաց անելով, տեսնում են ցածր փողոցում շներու զարհուրելի իրարանցում, որոնք ցատկոտում են ու կուփ կուփ վեր թռչում, կատղածի պէս պտիտ են գալի, գլուխները պատերուն են զարկում, քարին տալի։ Առաւօտուն ինչ ես տեսնում, փողոցում քարայատակին վրայ փռուած են մի շատ շանսատակներ։ Թաղին բժիշկը կամ դեղագործն է, որ գիշերանց ուսման պարապելու սովորութիւն ունենալով և չուզելով անհանգիստ լինել շնային կարգից, մի շաբթու համար իրանց հանգիստ գիշեր են ճարում դեղատու գնդիկներ բաշխելով դրանց։ Այդ պատճառն ու դրա պէս ուրիշներ շարունակ նուազեցնում են շներու թիւը Պէրայում ու Կալաթայում։

Բայց ինչ օգուտ, այս տեղերից գաղթում են Կ. Պոլիս ու գիւղերը և այդ տեղերում աճում են ու բազմանում, վասն զի գընդիկներու փոխան փաշաներու ամառանոցներից և ապարանքներից սակառներով հացի թիքէն ու խաներով կրծելու ոսկրներ ու ծամոցներ են գտնում. մանաւանդ Սուլտանի խոհանոցներու դռներու առջև, որտեղ հարիւրաւոր շներ ամեն օր առատօրէն կերակրւում են։ Նմանապէս Բոսֆորի թուրք փաշաներու ամառանոցներից առատ ուտելիք է բաշխւում իրանց յատկապէս խոհարարներու մանչերու ձեռքով։ Այդ կերպով Կ. Պոլսոյ շնային մեծ կարգը այն կորուստն որ ունեցած է կռուելուց, սովածութիւնից, թունից, հետզհետէ տեղն է բերած, աճելով աճած ամեն տեղ այն աստիճան, որ կարելի է կարծել, թէ ամբողջ Կ. Պոլսում, վերառնելով իր գիւղերու արուարձանները, երկու-երեք հարիւր հազար շնային բնակիչ լինի այս յետագայ հաշուով։ Առհասարակ թուրքերն ասում են որ ամբողջ Կ. Պոլսում ութսուն հազար փողոց կլինի, թէև երբէք չեն թուած. այդ ամեն մի փողոցում թէ որ չորս շուն բնակում լինի, ինչպէս որ իմ բնակած նեղ ու կարճ փողոցում չորս են թուով, թող Սուլտանի սառայներուն խոհանոցներու առաջն ելող հարիւրաւոր շները, նոյնպէս փաշաներուն, բէկերուն, մսագործներուն ճաշարաններուն կայլն։ Ուստի բազմապատկելով այդ ութսուն հազար փողոցի շները չորսով, կունենայ Կ. Պոլիս 320,000 շնային բնակիչ, 900,000 մարդկային բնակիչներով, հետևաբար Կ. Պոլիս, ինչպէս աշխարհիս քրիստոնեայ, մահմեդական, մովսիսական և հեթանոս ազգերու բնակատեղին է եղել շահագործութեան համար, այնպէս էլ շնային ցեղին ուտեստի, այն տարբերութեամբ, որ այդ զանազան ազգերը մի որևէ ուղղակի կամ անուղղակի տուրք են վճարում սուլտանին, մինչդեռ շները որևէ տուրք տալուց ազատ են ու կազմում են առանձնաշնորհուած մի տարերք Օսմանցոց Սուլտանի մայրաքաղաքում։

ՄԻԽԱՔ ՏԷՐ-ՄԵՍՐՈՊԵԱՆՑ

ԱՄՍՈՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻԿԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Հայ մտքի և խօսքի զարգացման ու բարգաւաճման գաղափարը ուղեցոյց առնելով մենք 15 տարի առաջ դիմեցինք «Լումայի» հրատարակութեան։

Մի կողմից կռիւ մղելով ցենզուրական և նիւթական ծանր հանգամանքների հետ, մենք միւս կողմից, կռիւ էինք մղում հայկական անցեալը ծածկող փոշիի-մոռացման դէմ, հանելով այս կամ այն անկիւնում թագցրած և կորստի մատնուած պատմական և գրական հարուստ նիւթերը և այդպիսով նպաստում հայկական անցեալի և ներկայի մանրամասն և բազմակողմանի ուսումնասիրութեան։

Անթիւ զոհաբերութիւններով մենք առաջ էինք ընթանում լի յոյսերով, որ հայ կարդացող հասարակութիւնը, ըմբռնելով մեր սկսած գործի օգտակար լինելը, իւր աջակցութիւնը ցոյց կտայ և մենք մասամբ յուսախաբ չեղանք։ Լսուեցին խրախուսուող ձայներ և մենք քաջալերուած կրեցինք այդ ծանր բեռը։

Վերջին հնգամեակի ընթացքում, երբ խմբագիր լինելու «մանիան» կամ խմբագրամոլութիւնը տիրեց բոլոր փառասէր անձանց և թերթերը սկսեցին աճել սունկի նման, նոյնչափ կարճատև կեանք ունենալու համար, ևս առաւել ծանրացաւ մեր գործը։

Բայց, հողմը անցաւ. երկինքը պարզուեց. միտքը նորից կենդրոնացաւ քաղաքակրթութեան գաղափարի վրայ...

Եւ մենք զինուած նոյն գաղափարով շարունակում ենք մեր գործը։

Ազգային յառաջադիմութիւն, ազգային անցեալ և ներկայ կեանքի ու գրականութեան բազմակողմանի ուսումնասիրութիւն և հալածանք՝ դէպի այդ գաղափարների արգելք հանդիսացող անձը և գործը։

Ահա մեր մշտական դէվիզը։

Սորանով դիմում ենք մեր դէվիզի համակրող բոլոր անձանց, հրաւիրելով աջակցել մեզ, որովհետև «Լուման» միշտ ծառայել է ընդհանուր շահերի և երբէք՝ անձնական —նիւթականի։

Սիրել մի ազգ, հասկանալ նրա բացասական և դրական կողմերը, ճիշտ գնահատել նրա ներկայ վիճակը՝ կարելի է միմիայն նրա անցեալի հետ լաւ ծանօթ լինելով։ Ահա ինչու աջակցելու մեր անցեալի այդպիսի ծանօթութեան ժողովրդի աւելի լայն շրջանին, մենք իբր փորձ 1910 թուին որոշել ենք տալ մեր բաժանորդներին Եղիշէի Վարդանանց պատմութեան՝ աշխարհաբար նոր թարգմանութիւնը իբրև ձրի յաւելուած։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԼՈՒՐԵՐ

Մամուլը հաղորդեց, որ Պետական Դումայում հայ ազգի ներկայացուցիչներից մէկի ճառը ռուս հայրենասէրների կողմից անուանուել է հաչոց։ Տրամաբանօրէն դատելով, ուրեմն «հաչում են բոլոր ռուսահայերը, քանի որ հայ ճառախօսը ոչ թէ մի անհատ է այնտեղ, այլ ներկայացնում է ամբողջ ռուսահայ ժողովուրդը։

Այժմեան ռուս ժողովուրդը երևի պատմութիւն ասած բանից տեղեկութիւն չունի. եթէ նա պատմութիւն գիտենար և այն էլ միայն վերջին 140 տարիների պատմութիւնը, այն ժամանակ նա պիտի փայփայէր այն մի բուռն հսկայ ժողովրդի զաւակներին, որոնց հայրերը, պապերն ու նրանց նախնիքները շատ բան զոհելով, մեծաքանակ արիւն թափելով և իրանց նիւթական ու բարոյական ջանքը չխնայելով, ամբողջ Կովկասը նուաճեցին ռուս տէրութեան համար։ Եթէ այժմեան ռուս ժողովուրդը գիտենար թէ ինչպիսի երախտագիտութեամբ էին յիշում Ռուսիայի ինքնակալները և իրանց նախնիքները հայ ժողովրդին, ինչ պատիւներ էին տալիս այդ ծառայութիւնների փոխարէն, մի փոքր աւելի բարեմտութեամբ կվերաբերուէին դէպի այդ քայքայուած և անտէր հայ ժողովուրդը։

Կարդացէք, պ. պ. «ռուս հայրենասէրներ», կարդացէք Ռուսաստանի վերջին դարերի պատմութիւնը հարազատ աղբիւրներից, մտէք մայրաքաղաքի հարուստ մատենադարանները և ուսումնասիրեցէք Ռուսիայի մեծ ինքնակալների անհամար արտօնագիրները։ Գուցէ այն ժամանակ ամաչէք։

Մեր ընթերցողները երևի կյիշեն, որ տարիներ առաջ սուլթան Աբդիւլ Համիդը առաջարկեց Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին՝ Կ. Պոլսի Պանկալթիի նշանաւոր գերեզմանատնից ննջեցեալների ոսկորները տեղափոխել ուրիշ գերեզմանատուն և գիտինը յանձնել իրան։ Այդ բանին ուժեղ կերպով դիմադրեց հայ աղգը պատճառաբանելով, որ Հայոց եկեղեցու օրէնքներով անկարելի է ննջեցեալների մարմինը տեղափոխել և Համիդը ստիպուած եղաւ հրաժարուել իւր դիտաւորութիւնից։ Ներկայումս, ինչպէս գրում են մեզ Կ. Պոլսից, այդ նոյն առաջարկն անում է արդէն ոչ թէ Աբդիւլ Համիդը, այլ Կ. Պոլսի Հայոց ազգային ժողովի տընտեսական խորհուրդը հետեւեալ պատճառաբանութեամբ։

Ազգային զանազան գումարներ, մօտ կէս միլիոն բուբլու, կտակուած զանազան ազգայիներից այլ և այլ բարեգործական, գլխաւորապէս կրթական նպատակով դրուած են դրամատան մէջ. և որովհետև այդ գումարը միայն 3—4% է բերում և միւս կողմից Պանկալթիի պէս նշանաւոր թաղում գտնուած այդ մեծագին դետինը ննջեցեալներին յատկացուած լինելով՝ ապարդիւն է մընում, տնտեսական խորհուրդը առաջարկում է ազգային ժողովին ննջեցեալների աճիւնները տեղափոխել մի ուրիշ տեղ և յիշեալ կէս միլիոն դրամով արդիւնաբեր շէնքեր կառուցանել։ Տնտեսական խորհուրդն առաջարկում է մինչև անգամ տեղափոխել Յակովբ կաթողիկոսի գերեզմանը, որ իբրև ուխտատեղի է ծառայում ամբողջ Կ. Պոլսի հայ բնակիչների համար։ Հետաքրքրական է թէ ինչ որոշում պիտի անէ այս մասին Կ. Պոլսի Ազգային ժողովը։

Կիլիկիայի վեհ. Կաթողիկոս տ. Սահակ Խապայեանցը տեսնելով Կիլիկիայի վերին ասաիճանի լքուած վիճակը և որ ինքը ոչ մի նիւթական միջոց չունի ծով կարիքին դէթ մասամբ բաւականութիւն տալ, միւս կողմից տեսնելով, որ ազգային ժողովը իր նախկին պատճառաբանեալ հրաժարականին ոչ մի կարևորութիւն և պատասխան չէ տուել, ստիպուած այս օրերս տուել է իր երկրորդ հրաժարականը։

Ադանայի կուսակալ Ջեմալ-բէյը Դ. Դուռը ուղարկած մի հեռագրով խնդրել է, որ Հալէպի ու Ադանայի բազմաթիւ անմշակ մնացած (երևի հայերի կոտորածից անտէր մնացած) հողերի վերայ

ընակութիւն հաստատելու համար Բուլղարիայից և Ռուսաստանից եկած 5000 մահմետական գաղթականներ ուղարկուին։ (Բզ.)

Կ. Պոլսից մեզ գրում են. «Հոգևոր իշխանութիւնը դեռ կՀանայ ամին. Օրմանեանը եկեղեցիներէն հեռու պահել, որով Ն. սրբազնութիւնն էլ չկրցաւ նոյն իսկ Հ. Մկրեանի յուղարկաւորութեան մասնակցել և դամբանականով մը ի վեր հանել Մկրեանի բուն հոգին, զոր չկրցին ընել ոչ նորա մահուան առթիւ ճառող դամբանախօսը և ոչ ալ մեր խմբագիրները։ Հանրութեան մէջ իսկ Մկրեանի դէմ անհամակիր հոսանք մը կար, որուն գլխաւորներն էին եկեղեցականները, վեղարաւորներ և անվեղարներ, որոնց ծանր կուգար Մկրեանի անկաշկանդ ընութիւնը և խրոխտ ընթացքը և քահանայական արժանապատուութեան ձգտումը, մինչ նոյն իսկ քահանայութիւնը՝ իւր ստորնացած դիրքին համակերպիլ կը սիրէր, անկէ փնտրելով իւր շահն ու ապրուստը։—Պոլսոյ ազգային վիճակն ալ բաւական խեղճացած է։ Դժբաղտաբար դաշնակցականք համակրութիւն կորսնցուցին իրենց յախուռն ընկերվարականութեամբ, և Դուրեան սրբազան անճարակցաւ իւրովի իւր գործը վարել, և ինկանք այնպիսի փոս մը, ուստից, քանի ամիսներ են, դեռ ելնելու կերպը չեն գտած։ Կառավարութիւնն ալ կը խայտայ տեսնելով որ Հայեր ինքզինքին կը տկարացնեն, և միթէ իրեն հոգն է Հայերուն օգնել. միթէ լաւ չէ՞ որ արևելքի այդ կարևոր տարրը օրէցօր չքանայ, որպէս զի իւր տարրը զօրաւոր մրցակից մը չունենայ»։

Պ. Ալէքսանդր Մանթաշեանը ի յիշատակ իւր նոր վախճանուած ամուսնու իւր ծախքով կառուցանում է Էջմիածնի կաթողիկոսական վեհարանը, ծախսելով այդ շինութեան վրայ հարիւր հազար ռուբլի։ Արդէն Էջմիածին են գնացել մի քանի ճարտարապետներ կարևոր նախապատրաստութիւնները տեսնելու։

Վեհ. Կաթողիկոսի Սանահին գտնուած ժամանակ մի խումբ անձինք—պ. պ. Ստ. Լիսիցեան, Եր. Լալայեան, Իս. Յարութիւնեան և Գիւտ աք. Աղանեան ցանկալով յաւերժացնել այդ օրը՝ որոշել էին աշխատել վերանորոգելու Հաղբատի նշանաւոր վանքն ու հնութիւնները և բագրատունեաց այդ սքանչելի կերտուածքի մնացորդները ազատել այժմեան ապականութիւնից և քայքայումից. և տեղն ու տեղը դիմելով վեհին՝ նախ ստացել էին Ն. ս. հաճութիւնը և ապա Հաղբատի կալուածատէր պ. Միք. Արամեանին խնդրել, որ ընդունէ այդ յանձնաժողովի պատուաւոր անդամի կոչումը։

Նորին օծութիւնը հաճութեամբ ընդունեց այդ առաջարկը

և օրհնեց, պ. Արամեանը նոյնպէս ուրախութեամբ յանձն առաւ իւրովսանն նպաստել այդ գործին, ինչպէս և իւր հաւանութիւնը տուեց թեմիս ս. Առաջնորդը։

Այս մասին գործին ձեռնարկողները երկու ամիս առաջ դիմել էին վեհին և խնդրել նորա հաստատութիւնը։

Այժմ, ինչպէս լսում ենք, վեհ. Հայրապետը բարեհաճել է հաստատել յանձնաժողով հետեւեալ անձերից՝ նախագահ ս. Գարեգին արքեպիսկոպոս, պատուաւոր անդամ Մ. Արամեանց և անդամներ՝ Ստ. Լիսիցեան, Իս. Յարութիւնեան Եր. Լալայեանց և Գիւտ աք. Աղանեանց։

Առաջիկայ յունուարից Ն. Նախիջեւանում կսկսուի հրատարակուել հայերէն լեզուով «Լոյս» անունով մի շաբաթաթերթ Գէորգ Ռէիղեանի խմբագրութեամբ։

Թիֆլիսի Հայ հասարակութեան կողմից հանգ. մեծ իշխան Միխայիլ Նիկոլայևէչի թաղման հանդիսին ներկայ գտնուելու համար գնացին Ա. Քիշմիշեան և Յ. Մելիք Աղամալեան։ Իսկ վեհ. Հայրապետի կողմից Մեսրովպ եպիսկոպոսը։

Հանգուցեալի վրայ Թիֆլիսի Հայ հասարակութեան կողմից կդրուի արծաթեայ պսակ։

«Բիւզանդիոն»ը հաղորդում է, որ Աւ. Ահարոնեանը հիւանդանոցի բանտի մէջ թատրոնական մի նոր պիես է գրել և թէ առհասարակ բանտարկեալ գրագէտը լաւ է խնամուում հիւանդանոցի վարչութեան կողմից։

Մոսկայում 1907 թուից Ի. Ե. Զաբելինի նախաձեռնութեամբ բացուել է հնագիտական ճեմարան, ուր պէտք է պատրաստուին մասնագէտներ յատուկ թանգարանների, դիւանատներ և մատենադարանների համար, հնագիտական ամենառարկաների պատրաստութեամբ, և ուր արդէն ուսանում են այժմ մօտ 300 լսողներ։

Այժմ ճեմարանի վարչութիւնը որոշել է կառուցանել յատուկ շէնք իր համար և նրան կից թանգարանի շինութիւն պատմաբան Զաբելինի յիշատակին. և այդ նպատակի համար հանգանակութիւն է բացել ամեն տեղ։

Ճեմարանի վարչութիւնը ուղարկել է բաժանորդաթերթ և խմբագրութեանս անունով, ուր ցանկացողները մասնակցել այդ թանգարանի շինութեան կարող են ուղղել իրանց նուիրատուութիւնները։

Լսում ենք, որ մօտերս Թիֆլիսում կսկսուի հրատարակուել մի մեծահատոր հայերէն ալմանախ, ուր կտպագրուին յատկապէս հայ և օտարազգի միջնակարգ դպրոցների աշակերտների

աշխատութիւններ։ Ալմանախի թէ խմբագրութիւնը և թէ հրատարակչական գործը կազմակերպելը իր վրայ է առել պ. Ստ. Լիսիցեանը։

■ Այս նոյեմբերին լրացաւ մեր նշանաւոր բանաստեղծ Գարեգին եպ. Սրուանձտեանցի մահուան 17 տարին, այդ առիթով այս համարում տալիս ենք նրա պատկերն և կենսագրութիւնը մեր հանգուցեալ աշխատակից Յովհ. Ք. Մկրեանի գրած, որ ժամանակին չէր թոյլատրել ամբողջութեամբ տպագրել տաճկաստանի հայ գրաքննիչը։

† Բագուում վախճանուեց բժ. Միսաք Արամեանցը, որ յայտնի գրական և հասարակական գործիչ էր 60—70 ական թուերին և ջերմ հալածող էր կեղծ ազատամտական ուղղութեան. ինքը սիրող հայ ժողովրդին և հայ եկեղեցու, միևնոյն ժամանակ հմուտ հայագէտ էր և պատմագէտ և համոզուած ազգասէր։ Նրա գրուածները զետեղուած զանազան լրագրներում և գլխաւորապէս «Նոր-Դար»ում։ Աշխատակցում էր նաև «Լումայ»ին։—Յարգանք նրա յիշատակին։

■ Լրագրներում կարդում ենք, որ տաճիկ կառավարութիւնը վերջապէս որոշել է ոչնչացնել Կ. Պոլսի շները և սահմանադրութեան բարեբեր հետևանքները տարածուեցան ամենից առաջ... շների վրայ։ Արդ՝ քանի որ Կ. Պոլսի անթիւ շները այսուհետև պատմութեան պիտի պատկանեն՝ խմբագրութիւնս ներկայ համարում տպագրում է հանգ. Մարկոս Աղաբէգեանի մի յօդուած, նուիրուած այդ հռչակաւոր «դասակարգ»ին։ Աղաբէգեանը իւր վերջին օրերն էր ուղարկել այն տպագրելու «Լումայ»ում «Միսաք Տէր-Մեսրոպեանց» ստորագրութեամբ։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

1. Ներսէս ք. Տէր-Կարապետեանց Ատենախօսութիւն. Թիֆլիս 1909.—Մի հոգեբուղխ քարոզ է խօսուած Բագուի հայոց եկեղեցում վեհ. Տ. Մատթէոս Բ. կաթողիկոսի օծման օրը։ Առհասարակ պէտք է ասել, որ Հ. Ներսէսը խօսելու ձիրք ունի և հայ հոգին բացարձակապէս երևում է նրա հրատարակած քարոզների մէջ, միայն խորհուրդ կտայինք բազմաթիւ կրկնութիւններից խուսափել։

2. Pessimist. Ի՞նչ է հասարակութիւնը. Թիֆլիս 1909, արտատպուած «Լումայ» ամսագրից։

3. Կրօնի դասատուութիւնը ա. բաժանմունքում. կազմեց Քամալեանց Ս. դպիր. Թիֆլիս 1909։

Խմբագիր հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. Բ. ԱՂԱՆԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱԶՄԱՎԷՊ

ԱՄՍԱԳԻՐ

«Բազմավէպը»-ը կը բովանդակէ Ազգային Բանասիրական-Գրական - Պատմական-Կենսագրական և այլ յօդուածներ։ Իր նպատակն է բարձրացընել Հայ ժողովրդի միտքը գեղարուեստով, գիտութեամբ, իր Անցեալին եւ Ներկային լիուլի գիտակցութեամբ։

«Բազմավէպը»-ը իր Բանասիրական բաժնոյն հետ՝ պիտի զօրացնէ գեղագիտական բաժինը գեղարուեստական նկարներով և գրական ընտիր յօդուածներով. և ի հարկին իր սովորական ծաւալին վրա պիտի աւելցնէ 16 էջ, որպէս զի կարենայ երկու շաբաթն անգամ մը հրատարակիլ 32 էջերով։

ԲԱԶՄԱՎԷՊԻ ՆԻՒԵՐԸ

Անոնք որ 1909 Դեկտեմբեր 1—14-էն առաջ կը բաժանորդագրուին, յղելով միանգամայն 10 ֆր.—4 ռուպլի.— 2 տոլար.— 50 դահեկան՝ իրը նուէր պիտի ստանան 2 ֆր. արժողութեամբ գիրք մը (Բաժանորդաց կը յղենք գրոց ցուցակը)։

Բարեգործական հաստատութիւնք, Ընկերակցութիւնք, գիւղերու Ուսուցիչք, Ուսանողք, Վարժարանք կրնան ամբողջ տարեկան Բազմավէպը ստանալ մի միայն 30 դահեկան, 2,50 ռբ, 6 ֆր. յղելով։

Դիմել rédaction ee la revue «Bazmavep» St. Lazare, Venise (Italie)

ԲԻԶԱՆԴԻՈՆ

Ազատ հայութերի ամենօրեայ

(Խմբ. Բ. Բէչեան)

Տարեկան՝ Տաճկաստան 120 ղրշ. — Արտասահման 40 ֆր.

Հասցէ՝ rédaction du Journal «Puzantion» Sultan Hamam, Mola Tache Constantinople

---

ԱՆԱՀԻՏ

Գրական, Գեղարուեստական)

Խմբագիր Ա. Զօպանեան.

Լոյս կը տեսնէ ճոխ պարունակութեամբ՝ երկու ամիսն անգամ մը։

Տարեկան բաժնեգին՝ ֆր. 12,—ռպլ. 6, —տոլար՝ 3 ղրշ. 60։

Դիմել Rédaction de Revue «ANAHIT» 17. rue La Bruyére PARIS

Անահիտը պիտի հրատարակուի այսուհետև կանոնաւորապէս՝ երկու ամիսն անգամ մը։ Ներկայ տարեշրջանը կը սկսի Ապրիլ-Մայիսին և պիտի լրանայ 1910-ի Մարտ-Ապրիլին։

ГАЗЕТА

„ЗАКАВКАЗЬЕ“

(годъ пятый)

Подписная цѣна

Съ доставкой въ Тифлисѣ:

за годъ . . . . . 6. — коп.

за полгода . . . . . 3 руб. 50 коп.

Съ пересылкой въ другіе города:

за годъ . . . . . 8 руб. — коп.

за полгода . . . . . 4 руб. 50 коп.

Помѣсячно повсюду 75 коп. Отдѣльный №—5 коп. За-границу вдвое.

За перемѣну адреса городского на иногородній— руб., съ иногородняго на иногородній—50 коп.

Адресъ редакціи: Тифлисъ, Эриванская площадь домъ Гургенова, общій входъ съ конторой нотаріуса Мгеброва.

Редакторъ-Издатель Г. І. АМИРАДЖИБИ

"ԳԻՒՂԱՏՆՏԵՍ,,

Պատկերազարդ շաբաթաթերթ (Բ. տարի «ԳԻՒՂԱՏՆՏԵՍԻ» բովանդակութիւնը.— Երկրագործութիւն։ Անասնաբուծութիւն և կաթնատնտեսութիւն։ Պարտիզպանութիւն և պտղաբուծութիւն։ Այգեգործութիւն և գինեգործութիւն։ Ցատուկ բոյսերի մշակութիւն։ Մեղւաբուծութիւն և շերամապահութիւն։ Բանջարաբուծութիւն։ Թռչնապահութիւն։ Կօոպերացիա և սպառողական ընկերութիւններ։ Գիւղատնտեսական նորութիւններ։ Գիւղատնտեսական կեանք։ Գրախօսութիւն։ Թղթակցութիւններ։ Տնայնագործութիւն և տնարարութիւն։ Հարց և պատասխաններ։ Պօստ-արկղ և յայտարարութիւններ։

Առաջիկայ 1910 թուին «Գիւղատնտեսին» աշխատակցելու են նաև թիւրքահայ գիւղատնտեսներ։

«Գիւղատնտեսը» 1910 թուի իր տարեկան բաժանորդներին թերթի հատորներից դուրս տալու է որպէս նուէր՝

ՀԱՑԱԲՈՅՍԵՐԻ ԵՒ ԽՈՏԱԲՈՅՍԵՐԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԼԱՒԱԳՈՅՆ ՍԵՐՄԵՐ

Բաժնեգինը

Ռուսաստանում

Տարին . . . . 3 ռուբլի
Կէս տարին . . . . 2 ռուբլի

Արտասահմանում

Տարին . . 4 ռուբլի (12 ֆրանկ(
Կէս տարին . . 2 ռ. 50 կ. (7 ֆրանկ)

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція «Гюхатнтесъ». Արտասահմանից՝ Tiflis (Russie) rédaction «Guchatntess».

ՆՈՐ ԴՊՐՈՑ

Մանկավարժական ամսագիր 3-րդ տարի

Հրատարակութիւն «Կովկասի Հայոց դպրոցների ուսուցիչների և վարժուհիների Միութեան» կենդր. Վարչութեան։

Բաժնեվճարն է—Միութեան անդամների համար տարեկան 3 ռ., կէս տար. 2 ռ. ոչ անդամների համար տարեկան 5 ռ., կէս տա. 3 ռ.

Тифлисъ, Редакція журнала «Нор-Дпроцъ» Tiflis (Caucase) redaction du Journal «Nor-Dprotz»

Պատասխանատու խմբագիր
Իսահակ Յարութիւնեան

„ՍՈՒՐՀԱՆԴԱԿ"

Գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական լրագիրը, որն առայժմ լոյս է տեսնելու շաբաթը երեք անգամ՝ կիրակի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը, իսկ ապագայում ամեն օր։

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԲԱԺՆԵԳԻՆՆ Է ԱՌԱՆՁԻՆ

Տարեկան . . . . . 5 ռուբլի
Կէս տարին . . . . . 3 ռ.
Երեք ամիսը . . . . . 1 ռ. 50 կ.
Թիֆլիզում տարեկան 4 ռուբլի

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ» ԲԱԺՆԵԳԻՆՆ Է ԱՌԱՆՁԻՆ

Տարեկան . . . . . 7 ռուբլի
Կէս տարին . . . . . 4 ռ. » »
Երեք ամիսը . . . . . 2 ռ. 25 կ.
Ամիսը . . . . . 75 կ.

ԽԱԹԱԲԱԼԱՆ ԵՒ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԸ ՄԻԱՍԻՆ ԱՐԺԵՆ

Տարեկան . . . . . 10 ռուբլի
Կէս տարին . . . . . 6 ռ.
Երեք ամիսը . . . . . 3 ռ. 50 կ.
Մէկ ամիսը . . . . . 1 ռ. 20 կ.

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала". Հեռագրով՝ Тифлисъ „Хатабала"
Արտասահմանից Tiflis, Caucas rédaction «Khatabala»

Բացված է 1910 թ. բաժանորդագրութիւնը

ՀՈՐԻԶՈՆ

Գրական, քաղաքական, տնտեսական եւ հասարակական լրագրի

	ՏԱՐԵԿԱՆ	6 ԱՄՍԻԱՆԸ	3 ԱՄՍԻԱՆԸ	1 ԱՄՍԻԱՆԸ
Ռուսաստանի համար.	8 ր.—կ.	4 բուբ. 50 կոպ.	2 բուբ. 30 կոպ.	80 կոպ.
Պարսկաստանի	9 ր.—կ.	5 բուբ. — »	2 բուբ. 70 կոպ.	1 բուբ.— »
Թուրքիայի	20 ղրշ.	70 ղրշ. — »	35 ղրշ. — »	14 ղրշ — »
Ամերիկայի	6 դոլլար	3½ դոլլար »		— — »
Եւրոպայի	30 ֆր.	18 ֆր. »		— — »

Բաժանորդագրութիւն ընդունւում է միայն իւրաքանչիւր ամսի 1-ից։ Ապառիկ ոչ ոքի թերթ չէ ուղարկւում։

1909 տարւայ տարեկան բաժանորդները կստանան թերթը՝ վճարելով միայն **6** ռուբլի:

Հասցէն՝ Тифлисъ. Редакція "ОРИЗОНЪ" Вельяминовская, № 16. *Արտասահմանից՝* Rédaction „Horizon" Tiflis (Russie-Caucase)։

„ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ"

ԻԴ — 1910 ՏԱՐԻՈՅ

«Հանդէս Ամսօրեան» լոյս կտեսնէ ամեն ամսագլխին կառավարութեամբ Վիէննայի Մխիթարեան հարց և գործակցութեամբ ազգային կարող բանասէրներու. «Հանդէս Ամսօրեան» նուիրւած է ամբողջապէս ազգային հին և նոր գրականութեան. կուտայ իր էջերու մէջ ամենազգի կարճ և ընդարձակ ուսումնասիրութիւններ և տեսութիւններ հայ աշխարհին գրականութեան, լեզուին, հնախօսութեան և պատմութեան վրա։ «Հանդէս Ամսօրեայի» բաժնեգինն է կանխիկ վճարմամբ տարեկան 15 ֆր.—6 ր., Իւրաքանչիւր համար կարժէ 1, 50 ֆր.—70 կոպ.։ «Հանդէս Ամսօրեայի» բաժանորդ կարելի է գրուիլ՝ Վիէննա, Խմբագրատունը. դիմել հասցէով՝ Rédaction de la revue „Handes Amsorya", Vienne, VII/2 Mechitharistengasse 4, *Թիֆլիս, դիմել* Mr. A. I. Mantacheff (pour Mr. Arakel Saroukhan), Tiflis *կամ «Գուտտենբերգի» գրավաճառանոցը։*

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Գրական, Գեղարուեստական եւ Քաղաքական պատկերազարդ հանդէս. 10 գիրք 10—ռ., 6 գիրք—8 ռ., 4 գիրք—5 ռ., մէկ գիրք—2 ռ.։

Тифлисъ, Редакція «Гехарвестъ», Tiflis (Caucase) rédaction «Kegharvest».

Խմբագիր-Հրատ. Գար. Լևոնեան

ՄԱՄՈՒԼԻ ՏԵԿ Է

ԵՂԻՇԷԻ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Աշխատութեամբ

ԴՈՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆԻ

Բացուած է 1910 թ. բաժանորդագրութիւնը

(ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

ՀԱՍԿԵՐ

մանկական պատկերազարդ ամսագրի

Ամսագիրը լոյս է տեսնում Թիֆլիսում 32—48 երեսանոց մեծադիր գրքոյկներով նախկին ընդարձակ ծրագրով Մշտական աշխատակցութեամբ ՑՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԵՒ ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

Ամսագիրը ունի նաև ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ուր շօշափուում են ընտանեկան կրթութեան վերաբերեալ կարևորագոյն հարցեր։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՀԱՆԱՊԱՐՀԱՏԱԽՍՈՎ.

Տարեկան ՀԱՍԿԵՐ, մանկ. բաժին	3 ռ.	մանկավարժ. բաժ. 4 ռ.
Կէս տարուանը . .	ռ. 80 կ.	. 2 ռ. 10 կ.
Մէկ ամսուանը . .	— 30 կ.	. — 35 կ.
Պարսկաստանում . .	3 ռ. 50 կ.	. 4 ռ. 50 կ.
Արտասահմանում տարեկան	ԻՆԸ ֆր.	ՏԱՍՆԵՐԿՈՒ ֆ կ.
Հրատարակութեան սկզբից մինչև 1909 թ. վերջը	11 ռ.	15 ռ.

15-Դ ՏԱՐԻ

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1910 ԹՈՒԻ

ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ

1910 թուին Լումայ լոյս կը տեսնի իւր այժմեան դիրքով, բաղկացած 64—80 երեսներից, մեր մշտական աշխատակիցների գործակցութեամբ։ Ինչպէս միշտ, հարկաւոր դէպքերում, կտրուն պատկերներ հասարակական երևոյթների առթիւ։

1910 թուի «ԼՈՒՄԱՅ»ի ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՈՂ բաժանորդները կստանան իբրև ՊՐԷՄԻԱ

ԵՂԻՇԷԻ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

աշխարհաբար նոր թարգմանութիւնը։

ԲԱԺՆԷԳԻՆՆ է տարեկան 6 *ռ., կէս տ.* 4*ռ.,*
Արտասահման „ 8 „ „ 5 „

ՈՒՈՒՑԻՉՆԵՐԻ, ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ, ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԵՒ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԼՈՒՄԱՅ»-Ի ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԷԳԻՆՆ է 4 ՌՈՒԲԼԻ

ԱՊԱՌԻԿ ՌԶ ՈՔԻ ՉԻ ՈՒՂԱՐԿՈՒԻ

Հասցէն Թիֆլիս Պոլիցէյսկայա 7. Tiflis Polizeiskaja, 7